ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԵԱՀՃՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՔՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բ. ՏԱՐԻ




ԲՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ - ՊԱՏՄԵԼ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՕՐ. Ն–ԱՐԻԳՆԱՉ



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Ա. ԵԱՀՃՃԵԱՆ
Ֆիլիճանըլար, Պայպլ Հաուզ
1923

Uit de nalatenschap van
Nubar Jessayan (1920-2009)

2239

Յ. Մ. ՍԷԹԵԱՆ

ՏՊԱՐԱՆ

ԿԱՋՄԱՏՈՒՆ

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, Ջահմահճքլար

№ 16

ՋԵԿՈՅՑ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՈՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

ՈՒՍՈՒՑՉԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԱՑ

Սոյն դասագիրքը ընթերցանութեան մեր դասընթացքին Բ. Մասը կը կազմէ, բեւ յատկացուած Մանկապարտեզի «ծաղիկ» դասարանին բայց եւ այնպէս կարելի է զայն արդիւնաւորապէս տալ այն փոքրիկներուն, որ կը կազմեն Մանկապարտեզի սահմաններէն վեր եղած նախակրթարանի առաջին տարին ձեւացնող տղոց:

Սոյն Բ. Մասը, ինչպէս կը տեսնուի, կը պարունակէ ոչ թէ միայն տղոց հասկնալի լեզուաւ գրուած մաներ ու բառոյալից պատմութիւններ, զորս անյապաբար կը կարդան, սոյն հատորին մէջ ամփոփուած են նաեւ սիրուն ոտանաւորներ, առակներ, ամէնքն ալ հանելի իրենց վառ երեւակայութիւնը հրապուրող: Մեծ ուշադրութիւն եղած է որ ներքեւ աստիճանաբար դասաւորումը, կարելի եղածին չափ, զանազանութիւն մը ներկայացնէ, որպէս զի տղաք կարենան գաղափարներու պաշար մը ունենալ իրենց շատ մատաղ տարիքին սկսեալ:

Միեւնոյն ժամանակ վարպետի մօտ մանկավարժական ու հոգեբանական պահերներ եկած են զարդարել սոյն հատորին էջերը, որոնք կոչուած են տալու իրագիտական այնպիսի ծանօթութիւններ, զորս պարտին ունենալ տղաք բոլոր մանկավարժական արդի պահանջմանց:

Յարգելի ուսուցիչք եւ ուսուցչուհիք եթէ կ'ուզեն որ արդիւնաւոր ըլլան իրենց բռնած ջանքերը, պէտք է որ սոյն հատորին մէջ գտնուած պատմութիւնները, խրատականներն ու առակները ոչ թէ միայն կարդան ու արտասանեն յստակ ու մաքուր առոգանութեամբ, այլ եւ ամենեն վոհրեերեն սկսեալ գոց սորվին եւ դասի ժամանակ պատմեն, իրենց հասկցողութեան համեմատ, ինչ որ մեծապէս պիտի նպաստագործէ իրենց խօսելու վարժութիւնը:

Այս շատ շահեկան կէտերուն վրայ նրատիրելով ուսուցչական մարմնոյն խորին ուշադրութիւնը, հեղինակը կը փութայ յայտարարել թէ իմը վարձատրուած պիտի զգայ իմզինքը տեսնելով երկար տարիներէ ի վեր Զուիցերիոյ Մանկավարժական բարձրագոյն վարժարաններուն ստացած ուսումը, օգտակար կ'ըլլայ, այսպիսով, հայ մանկըտւոյն առնասարակ:

ՕՐ. Ն-ԱՐԻԳՆԱՁ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Բ. ՏԱՐԻ

Ի. ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Եկէ՛ք, տեսէ՛ք սա՛ բացուած վարդը, նայեցէ՛ք ինչպէս կ՚երեւայ իր կանաչ կապած ճիւղին վրայ։ Այս է «ծաղիկ-ներուն թագուհին»։ Թերթերն են կարմրուկ,



տեսքն է ազնիւ ու գեղեցիկ, հոտը բուներ է օդին մէջ։ Բայց այս վարդն ստեղծողն ա՛լ աւելի գեղեցիկ է, ամէն սրտի՝ սիրելի։

Աւիւծն ամէն կենդանիներէն ուժեղ է. երբ իր որջէն ելլէ ու պոչը շարժելով՝ սկսի մռնչել, արածող կենդանիներն իրենց երկիւղէն կը թողուն դաշտը, գազաններըը կը փախչին ամայի տեղեր։

Ուժով է առիւծը, բայց իր ստեղծողն ա՛լ աւելի զօրաւոր է։ Ինք ըստ կամս ամէն մարդու կեանքը չափած է ու չկայ մէկն որ Անոր սրտմտութենէն ազատի, երբ յանցաւոր է։

Պայծառ է արեւը, երբոր անամպ երկինքէ ծագի. երբոյր վայրուն ճամբով առաջ կուգայ, բոլոր երկիրս իր լուսով լ'ողողէ։

Բայց աւելի վստաւոր է Ան որ արեւը ստեղծեց. Ինք ամէն տեղ կը մտնէ, Իր երեսի լոյսը իր ամէն արարածներըը կը լուսաւորէ, Ինք գիշեր չունի։ Անոր անունն է ԱՍՏՈՒԱԾ։ Իր գործն է աշխարհս, Ինքն ալ իր ամէն գործէն վեր է, Ինքն է գեղեցկութիւն, զօրութիւն, կարողութիւն։

---

2. ՀԱՄԲՈՅՐՆԵՐՍ

Երեք համբոյր ունիմ տալիք,
Անուշ համով երեք պաչիկ.
Ին խոշորն է իմ մեծ եղբօր,
Ին ուժովը իմ բարի հօր.
Բայց է՛ն երկարն՝ գիտէ՞ք որի...
Ա՛ն, մայրիկի՛ն կը վիճակի։

---

3. ԿԱՂԱՆԴ

Երէկ իրիկուն մեր տունը շատ հիւրեր եկան. անոնք կը սպասէին որ Նոր Տարին դիւաւորեն։ Մինչեւ կէս գիշեր արթուն մնացի ես և առանց հագուստներս հանելու քնացայ։ Այսօր շատ կանուխ արթնցայ և ծնողքիս հետ գացի Եկեղեցի, և դարձին անոնց ձեռքը համբուրելէետքը՝ բարի հօրեղբօրս սենեակը վազեցի, Նոր Տարին շնորհաւորեցի և մաղթեցի անոր երջանկութիւն և առողջութիւն։ Հօրեղբայրս համբուրեց զիս և պատկերատարդ դեղեցիկ գիրք մը նուէր տուաւ ինծի. «Եթէ միշտ աղէկ աշխատիս, ըսաւ, այսպիսի ընծաներ շատ կ'ընդունիս իմէ»։ Շնորհակալութեամբ համբուրեցի անոր ձեռքը։ Ո՞րքան բարի է իմ հօրեղբայրս. չմոռցաւ փոքր քոյրս ու եղբայրս ալ ուրախացնել։ Շուշանին ընծայեց գեղեցիկ պատճառապատանք մը, իսկ Գարեգինին՝ փոքրիկ թմբուկ մը. ուրախութենէն անիկա ա՛յնքան թմբուկը զարկաւ որ ձեռքերը թուլցան։

Այսօր ամէնքն ալ ուրախ են և Նոր Տարին կը շնորհաւորեն իրարու, փոխադարձ

բախտաւորութիւն մաղթելով։ Մայրս նոր հագուստներ հագցուց մեզի։ Իրիկունը հօրաքրոջս տունը պիտի երթանք։ Ես գիտեմ որ այնտեղ ալ պիտի խաղանք, երգենք ու շատ ուրախութիւններ ընենք։ Կաղանդը Ծունուար մէկին կը կատարուենք։



4. ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Կաղանդ պապան ահա՛ հասաւ,
Խաղալիքներ մեզի բերաւ.
Օրեր առաջ կ'սպասէինք,
Պէս պէս նուէր կ'երազէինք։

Բերաւ նաև չամիչ, թուզ, նուշ,
Նուռ, տանձ, կաղին, արմաւ, նուշ.
Ուտե՛նք խմե՛նք ուրախ ցատկենք,
Երգե՛նք, պարե՛նք ու քեզ գովենք։

Բարի՛ ծնողքս, բոլոր սրտէս
Երկար օրեր կը մաղթեմ ձեզ.
Միշտ երջանիկ, անվիշտ տարի,
Շնորհաւոր ձեզ նոր տարի։

---

5. ԱՂՈՒԷՍԻՆ ՈՒԽՏԸ

Աղուէսն անգամ մը, ինչպէս եղաւ, գետն ինկաւ ու պիտի խեղդուէր։

—Տէ՛ր Աստուած, պոռաց աղուէսը, զիս սա տեղէն ազատէ, քեզի աման մը խունկ կուտամ։

Աղուէսը կերպով մը ազատեցաւ գետէն։

—Հիմա թէ որ աման մը խունկ ծխեմ, Աստուած ալ պիտի նեղուի ծուխին մէջ, ըսաւ աղուէսը ինքնիրեն, ու չկատարեց ուխտը։

Ուրիշ օր մը աղուէսը նորէն ինկաւ գետը։

—Աստուած, քեզի երկու աման խունկ, հառաչեց ջուրին մէջէն։

Բայց Աստուած ա՛լ չի խաբուիր։



6. ՀԱՅԿ ՈՒ ԿՈՎԵՐԸ

Հայկ առաջին անգամ գիւղ եկած էր։ Գիւղին քովէն գետակ մը կը հոսէր։

Հայկ գետակին եղերքը կը խաղար, երբ անդիէն կովեր եկան ջուր խմելու։

Հայկ տեսաւ որ կովերը ջուրը կը մըտնեն։ Անմիջապէս տուն վազեց։

— Մա՛յրիկ, մա՛յրիկ, պոռաց Հայկ. կովերը պիտի թրջեն իրենց ոտքերը։

7. ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ՄԱՆԿԻԿԸ

—Ե՛լ, սիրո՛ւն մանկիկ,
Ե՛լ, իբրեւ թռչնիկ,
Թափ տանք թեւերու,
Բարձրանանք երկինք՝
Ուր աւէն էակ
Կը պատսպարուի
Տիրոջ թեւին տակ։

— Ո՛չ, ո՛վ հրեշտակ.
Ես ունիմ մայրիկ
Որ ինձ աւէն օր
Կու տայ շատ պաչիկ.
Երկինքը մայր կա՞յ
Որ ամէն օր տայ
Ինձ այնչափ պաչիկ։

8. ԾՈՅԼ ԱՂՋՆԱԿԸ

Գիրքն ի՛նչ ընեմ, կը պատռի,
Գրիչն ալ շուտ կը կոտրի,
Տիկնիկ ըլլար՝ խաղայի,
Կաղին ըլլար՝ աղայի
Հագուէի, շքուէի,
Փողոց, փողոց պտտէի
Ուտէի, խմէի,
Մթնէր՝ քնէի։



9. ԾՈՅԼ ԽՈՐԷՆԸ

Խորէն պարապ կ'անցընէր ժամանակը ու բնաւ չէր սերտեր դասը։

— Խո՛րէն, դասդ սերտէ, ըսաւ մայրիկը։

— Գլուխս կը ցաւի կոր, ըսաւ Խորէն յօրանջելով, և տեղէն չերեւցաւ։

Րոպէ մը վերջ՝ մայրիկն ըսաւ.

— Խո՛րէն եկո՛ւր, հաց կեր։


— Խնձոր ալ կուտա՞ս, մայրիկ, ըսաւ Խորէն, ուրախութեամբ վազելով դէպի մօրը։

10. ԺՐԱՋԱՆՈՒԹԻՒՆ

Մանուկ մը պատուհանին առջեւ նրստած՝ իր դասերը կը պատրաստէր, մինչ փայլուն արեւը դրսէն գինք կը հրաւիրեր. «Բաւական չէ՞ ինչ որ կարդացիր, ուրքի ելիր, խաղերդ սկսէ։» Իսկ տղան արեգական պատասխանեց. «Ո՛չ, պայծառ արեւի՛կ, ո՛չ, հիմա խաղալու միջոց չունիմ, թո՛ղ որ առաջ դասս վերջացնեմ։»

Մանուկը կը գրէ և կը կարդայ. պատուհանին տակ ճիւղին վրայ նստած սիրուն թռչնիկը կ'երգէ և միշտ այսպէս կ'ըսէ. «Բաւական չէ՞ ինչ որ կարդացիր, ուրքի ելիր, խաղերդ սկսէ։» Իսկ մանուկը թռչնիկին կը պատասխանէ. «Ո՛չ, սիրո՛ւն թռչնիկս, ոչ, հիմայ խաղալու միջոց չունիմ. թո՛ղ որ գործս աւարտեմ։»

Մանուկը կարդաց ու գրեց, բոլոր գործերը վերջացուց, գիրքերը դարակին մէջ դրաւ և դէպի պարտէզ վազեց և համարձակ ձայնով գոչեց. «Ո՞վ է ինձ հրաւիրողը։» Արեգակն այն ատեն անոր համար աւելի գեղեցիկ կը փայլէր, փոքրիկ թռչնին երգն ա՛լ աւելի դմայլելի կ'երեւար։



ԻԻ. ՄԵՂՈՒ

Հա՛, ծափեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանիշակը,
Մեղուն թողուց իր փեթակը,
Տզտըզալով, տղտըզալով։

Մեղուն թըռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղրը առաւ քաղցր անուշիկ.
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ
Բզբըզալով, բզբըզալով։

Անուշ մեղրը մանրը ուղղ.
Դեղին մոմն ալ աւէն սրբոց։

12. ԱՐՋԱԳԱՆԳ

Արամ չէր գիտեր տակաւին թէ արձագանգն ի՞նչ էր։ Օր մը որ դաշտը ելած էր, սկսաւ գոչել.

—Հո՛, հո՛, հո՛։

Անմիջապէս մօտիկ անտառէն նոյն ձայնը լսեց։

Տղայն զարմանալով՝ սկսաւ դողալ և գոչեց.

—Ո՞վ ես դուն։

Ձայնը պատասխանեց.

—Ո՞վ ես դուն։

Արամ բարկացաւ և գայրացմամբ ըսաւ.

—Դուն անպիտան տղայ մըն ես։

—Անպիտա՛ն տղայ, կրկնեց ձայնն անտառին խորէն։

Ա՛լ աւելի գայրացած՝ Արամ նախատական խօսքերը կրկնապատկեց, զորոնք արձագանգն իրեն վերադարձուց ճշդիւ։

Բարկութեամբ լեցուած՝ բոլոր անտառը պտտեցաւ, մացառներուն մէջ փնտռելով պզտիկ տղան, զոր հոն պահուըտած կը կարծէր. որպէսզի վրէժը առնէ։ Սակայն ընտիկանաբար ոչ ոք գտաւ հոն։

Այս ապարդիւն խուզարկութենէն յետոյ, Արամ տուն դարձաւ ու իր մօրը պատ-

մեց թէ չար տղայ մը անտառին մէջ պահուըտած էր և գինք անարգած։ Մայրը պատասխանեց.

—Զաւա՛կս, դուն ինքզինքդ կ'ամբաստանես, քանզի իսկ և իսկ խօսքերդ լսեցիր։ Ինչպէս որ յաճախ քու պատկերդ ջրին մէջ տեսած ես, նմանապէս լսեցիր քու բնական ձայնիդ հնչումը։ Եթէ սիրուն խօսքեր լսած ըլլայիր, սիրուն խօսքեր լսած պիտի ըլլայիր։

---

13. ՓՈԽԱԴԱՐՁ ԴԱՍ

Յակոբ անունով պզտիկ սպասաւոր մը իր տիրոջը կողմէն ստէպ որսեր ու պտուղներ նուէր կը տանէր ծեր, ագահ հասարակի մը որ փոքրիկ պարգեւ մը անգամ չէր տար անոր։ Օր մը տղան նապաստակ մը տարաւ ու առանց բարեւելու. «Ա՛ռ սա նապաստակը», ըսաւ։ — Ստահա՛կ, գոչեց ծերուկը բարկութեամբ, ատա՞նկ կ'ընեն». ապա հրամայեց որ իր տեղը նստի, և ինք նապաստակը ձեռքն առնելով՝ քաղաքավարութեամբ, կամաց կամաց առաջ եկաւ ու յարգանքով բարեւելով՝ ըսաւ. «Պարո՛ն, այս նապաստակը տէրս ղրկեց ձեզի, խընդ-

բելով որ ընդունելու պատիւն ընէք։» Այն առեն Յակոբ աթոռին մէջ երկննալով. «Շնորհակալ եմ, տղա՛ս» պատասխանեց և ձեռքը գրպանը խոթելով՝ յարեց. «Ա՛ռ քեզի մէճիտ մը ու գնա՛ կենացս գաւաթ մը պարպէ։»

---

14 ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ



Առողջապահութիւնը աշխարհի բարիքներուն ամենամեծը ու գլխաւորն է։ Ուստի միտքդ պահէ հետեւեալ կանոնները.

1. Զափազանց ուտելէ ու խմելէ և ամէն տեսակ շուայտութենէ զգուշացիր։

2. Անմարսելի կերակուրներ մի՛ ուտեր։

3. Կեցած տեղդ, գործելու և պառկելու սենեակդ միշտ մաքուր օդ պտնուի։ Ամառը միշտ, իսկ ձմեռը ստէպ պատուհանը բա՛ց։

4. Յանկարծական ցրտութենէ զգուշացիր։

5. Քրտնած միջոցիդ պաղ ջուր մի՛ խմեր։

6. Սաստիկ տաքութենէ զգուշացի՛ր։

7. Զգայարանքդ չափաւոր գործածէ։ Մուրճին մէջ կամ շատ նուրբ աշխատութիւններով աչքդ մի՛ յոգնեցներ։

8. Ուժէդ վեր գործ մի՛ ըներ. ծանրան մի՛ վերցներ։

9. Քեզի չվերաբերող գործերու ու կըռիւներու մէջ մի՛ նետուիր։

10. Երէկ առողջութիւնդ խանգարի, բժիշկի դիմէ՛ անյապաղ և անոր խրատին անսա՛։

ՀԱՆԵԼՈՒԿ

Տուն մը ունիմ.
Քակուելը կայ,
Շինուելը չկայ։ (Հակիր)


ԱՌԱԾ

Առողջութիւնը հարստութիւն է։
Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ։

---

15. ԳՐԻՉ

«Ո՛ գրիչ, ատի գո՞րծ է արդար
Որ քրոջըդ քով ըլլաս ճարտար,
Իսկ ձեռքիս մէջ աւելի պէս
Վեր վար երթաս, թուղթ աղտոտես։
Շիտակն ըսե՛մ, եթէ ներես,—
Ես կ'ամչնամ գրածներէս։
Իմ ալ աղէկ գրելուս մէկ քիչ
Հոգ տար, խնդրեմ, պարոն գրիչ,»—
Գրիչը բան մը չըսաւ բնաւ,
Իր գրելը յառաջ տարաւ։
Տղան չտեսաւ ուրիշ հնար,
Լաւ գրելու ի՛նք կր չանար.
Շատ օր չանցաւ. և ահա տես,
Լաւ գըրել կրնար իր քրոջը պէս։



16. ՎԵՐԷՆ ՈՒ ՎԱՐԷՆ

Աղուէսը, օր մը, բարձր աշտարակին գլուխն ելաւ և դարմանքով տեսաւ թէ վա-ըը՝ ամբողջ քաղաքը իր ոտքերուն տակ

տարածուած է. իսկ գետնի վրայ մարդիկը մրջիւնի պէս կ'երեւան։ Ադուէսը ինքնիրեն ըսաւ.

—Իրաւ որ ես յիմար եմ եղեր. հիմա հասկցայ թէ մարդիկ ի՛նչ պզտիկ, ի՛նչ խեղճուկ են եղեր. ես ալ այնքան կը վախնայի անոնցմէ։

Այդ պահուն, հեռուն պզտիկ մանուկներ կանգնած՝ կը խաղային, երբոր յանկարծ աշտարակին գլուխը բան մը տեսնելով՝ ուզեցին գիտնալ թէ ի՞նչ է, և իրարու հետ բաւական վիճելէ վերջ՝ վճիռ տուին թէ ճանճ է...։

ԱՌԱԾ

Ջուրը գայ, չաղացքը աղայ,
Խեճդն ուտէ, ելլէ խաղայ։

* * *

Տգէտ ես ու խոնարհ եղա՛ր,
Գիտունի չափ պատիւ ունիս.
Գիտուն ես ու հպարտ եղա՛ր,
Տգէտի չափ պատիւ չունիս։



17. ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Ծառուդիին խորր թաղ
Որ աւազով է ծածկըւած,
Երկու սիրուն աղջիկներ՝
Կատարինէն ու Վերգին՝
Երկար բարակ կ'աշխատին,
Շինեն փոքրիկ ածուներ։

Եղանակն է տաք, գարո՜ն...
Երբ օրը ըլլայ իրիկուն,
Ցնցուղ մր ջուր պարպելով
Լըրացընեն գործերնին,
Ու կը պառան միասին.
«Մայրի՛կ, եկո՛ւր, տե՛ս շուտով»։

18. ՄԵԾ ՀԱՅՐԻԿԸ

Յակորի մեծ հայրիկը շատ ծեր է. գլուխը կը տատանի ուսերուն վրայ, կռնակը կորացած է և ձեռքերը կը դողան։



Անիկա շատ անգամ հիւանդ կը պառկի։ Անցեալ ձմեռ ալ այդպէս հիւանդ էր և շատ տառապեցաւ։

Հիմակ որ գարունը եկած է, մեծ հայրիկը բաւական առողջացած է և պատուհանէն կը դիտէ դաշտերը որոնք ծածկուած են կանանչ խոտերով և գոյնզգոյն ծաղիկներով։

Մեծ հայրիկը գիտէ որ եթէ այդ դաշտերուն մէջ պոռայ՝ մր ընէ, շատ պիտի կազդուրուի, բայց այժ չունի և չի կրնար մինակը դուրս ելլել։ Յակոբի ծնողքն ալ չեն կրնար օգնել անոր, որովհետեւ մինչեւ իրիկուն զբաղած են։

Խեղճ մեծ հայրիկը տխուր է։ Բայց ահա Յակոբ անոր կը մօտենայ, դեղը կու տայ ու կ'ըսէ.

— Բարի մեծ հայրիկս, կ'ուզեմ որ մէկ-տեղ պտտինք դեղեցիկ դաշտերուն մէջ. ես թէև տկար եմ, բայց կրնամ քեզի օգնել։

Մեծ հայրիկը ուրախութեամբ ընդու-նեց Յակոբի առաջարկը։ Անոնք շատ օրեր մէկտեղ կը շրջին ադուր մարգագետիննե-րուն մէջ։ Մեծ հայրիկը այնչափ գոհ է Յակոբի վարմունքէն որ սիրուն բաներ կը պատմէ պտտած ատեններին։

---

19. ՊՏՂԱՍԷՐ ՏՂԱՆ

Ես մանչ մըն եմ գեղադէմ,
Կարդալ գրել ալ գիտեմ.
Շատ կը սիրեմ շաքար, նուշ
Ու խաղողին համը անուշ։

Երէկ ունիք, հաճեցէ՛ք,
Ինձ ալ բաժին հանեցէք.
Զանոնք կ'ուտեմ ես չափով,
Ոչ անկիրթի պէս ափով։

---

20. ԿՐԹՈՒԹԻՒՆԸ Կ'ՕՒՂՂԷ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Աշոտ ժիր, սրամիտ ու գարգացեալ էր։ Շատ մը թերութիւններ ալ ունէր, բայց ուսմամբ ու կրթութեամբ սանձահարեց զանոնք։ Արշակ ալ նախապէս բթամիտ ու ապուշ էր ու շատ մը թերութեանց տէր։ Երբ զայն կը յանդիմանէին իր նախկին բըռնաւորութեանց համար, պատասխանեց. «Կրթութեամբ յաղթեցի բնաւորութեանս, ասոր համար արհամարհուելո՞ւ եմ ձեզմէ։ Մարդ կը ծնի շատ թերի։ Կամքով, ջանքով, կրթութեամբ կ'ուղղէ իր յոռի, տգեղ կողմերը։ Վրաս ծիծաղելու, զիս յանդիմանելու և արհամարհելու տեղի չկայ», ըսաւ Արշակ։

---

21. ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆ

Իշխանի մը որպէս օր մը գնաց շինականի մը քով վիրդ ուտելու։ Շինականը ահագին մեծութեամբ շորգամ մը ներկայացուց։ Իշխանը պարգեւին համար շնորհակալ եղաւ շինականին և հրամայեց հազար դրուշ տալ անոր։ Գիւղացիները մէկը լսելով իշխանին այս առատաձեռնութիւնը՝ յոյս ունէր որ ընտիր ձի մը եթէ ընծայ

տանէր անոր, մեծ պարգեւներ պիտի ստանար։ Գնաց պալատ. իշխանը ընդունեց անոր բերած ձին, գովեց և ըսաւ. «Բերէ՛ք շողգամս, ահա՛ ձեզի պարգեւ հազուագիւտ շողգամ մը որ այնքա՛ն պատուական է իր տեսակին մէջ, որքան ձեր բերած ընծան։ Երթաս բարով, շատ շնորհակալ եմ։»



22. ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանանչ ոտքով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս է փոքրիկ ու ցած,
Աւօտներուն մէջ պահուըտած,
Բայց իմ փունջըս մէջ ամէն տան,
Թէ՛ աղքատի, թէ՛ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ
Կրնայ տեսնել միշտ ամէն մարդ.
Ես եմ գարնան սիրուն գուշակ,
Եւ իմ անունս է մանուշակ։



23. ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Յուլիս հայրիկին հետ անտառը գնաց պտըտելու։ Երբոր վերադարձան, մայրիկը հարցուց Յուլիսին։

—Պատմէ՛ նայիմ, ինչե՞ր տեսար անտառին մէջ։

Յուլիս պատասխանեց.

—Շատ բան տեսայ, մա՛յրիկ, ինչ գեղեցիկ է անտառը։ Ես շատ մանեկայ անտառին մէջ. այնտեղ տեսայ մեծ մեծ ծառեր, խիտ խիտ բուսած։ Երբ յոգնեցայ, շատ մեծ ծառի մը տակ նստայ։ Թռչուններըանուշ անուշ կ'երգէին անոր վրայ։

Անտառին մէջ տեսայ նաև վայրահատներ։ Անոնք իրենց կացիններով չոր ծառերը կը կտրէին և վառելու փայտ կը պատրաստէին։

Տեսայ այնտեղ սպաղ սպաղ աղբիւրներ. ես խմեցի անոնց անուշ ջուրերէն։ Անտառին մօտ կ'արածէր մօտակայ գիւղին նախիրը։ Նախիրին մօտ պառկած էին խոշոր գամբռներ։

Յանկարծ՝ բո՜մբ...։ Ես վեր ցատքեցի վախէս. թուշուններուր լռեցին։ Մէյմնալ տեսայ որ նապաստակը արիւնուռայ կը փախչէր. որսի շունը ալ կը վազէր ետեւէն։

---

24. ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ես կ'երթամ մանկապարտէզ,
Հոն կը սորվիմ բաներ պէսպէս։
Սա մարմինիս փափուկ, փոքրիկ,
Ըսե՞մ ձեզի մասերը գոզտրիկ.
Ահա՛ վերը գլխիկս սղուտը,
Վարն ալ ոտքերուս ձեւաւորը.
Հո՛ս է ճակատս ողորկ, փայլուն,
Հո՛ս՝ աչուկներուս պճըլտուն.
Այս է բթիկըս պճըլիկ,
Տակն ալ բերանըս կլորիկ.
Ահա՛ թուշերս՝ կարմիր խնձոր,
Ու շրթունքըս՝ նրուան կտոր.
Սա՛ է կզակըս թոմպուլիկ,
Տակն ալ վիզըս՝ քիչ մը հաստլիկ.

Տեսէ՛ք ունիմ դոյգ ականջներ
Որ կը լսեն ամէն ձայներ.
Նաեւ երկու ձեռքեր բամպակ,
Մէկը աջ ձեռքս է, միւսն ալ է ձախ.
Երթէ ուզեմ՝ վեր կը վերցնեմ
Այսպէս՝ ծափ, ծափ կը գարնեմ։
Ես երթալով մանկապարտէզ
Կը սորվիմ շատ բաներ այսպէս։

---

25. Ս. ԹԱԴԷՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ


Հայերը երկար տաեն քուրմերու և կուռքերու պղծութեան տակ մնացին, մինչեւ որ Քրիստոսի Համբարձումէն ետք Թադէոս Առաքեալը Հայոց քրիստոնէութիւն քարոզեց Քրիստոսի 34 թուականին։ Թադէոս ուրիշ տեղեր ալ պիտի երթար քարոզելու, ուստի խոյրարար Աղդէ անուն անձն եպիսկոպոս ձեռնադրեց և անցաւ գնաց Ս. Աբգարու քեռորդի Սանատրուկին քով և զայն ալ իր հետեւորդներով քրիստոնեայ ըրաւ, մկրտեց։ Նոյնպէս և Սանատրուկի աղջիկը՝ Ս. Սանդուխտ։ Սանատրուկ վերջը ստիպեց իր աղջիկը որ ուրանայ նոր կրօնքը, բայց ան չհնազանդեցաւ՝ ըսելով. «Ես կուռք չեմ պաշտեր։» Հայրը իր աղջիկը ու Թադէոս առաքեալը նահատակել տուաւ։

Թադէոսի մահէն ետք Յիսուսի առաքեալներէն՝ Բարթուղիմէոս առաքեալը եկաւ



Ս. ԱԱՀԱԳՈՒԽՏ ԼՈՅՍ

Հայոց մէջ ու քրիստոնէութիւնը քարոզեց։ Իր հետը բերաւ Ս. Կոյսին պատկերը։ Տիգրիս գետին եզերքը վանք մը շինեց Աստուածածնի անունով և այն պատկերը հոն դրաւ։ Ս. Թադէոս և Ս. Բարթուղիմէոս մեր նախկին լուսաւորիչներն են։



26. ՋԱՂԱՑԿԸ

Մեր գիւղին շատ մօտիկ՝
Ջաղացք մը կայ մենիկ.
Կը լսուի ամէն օր
Միակերպ իր ժխոր։

Ան գարի կամ ցորեն
Շարունակ ապալէն,
Կը գառնայ օրն ի բուն,
Ջայրագին, անընկուն։

Ջաղացպանը ու իր կին
Շատ բարի սիրտ ունին.
Ամէն մարդ անոնց քով
Կը գտնէ սէր, գորով։

27. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հայոց Լուսաւորութեան ու հաւատքի հայրն է Սուրբ Գրիգոր։ Ելթաղ անունով մէկը գինքը կեսարիա տարաւ։ Հոն մկրտուելով՝ Գրիգոր կոչուեցաւ և Փիրմիլիանոս Եպիսկոպոսին տեսչութեան տակ քրիստոնէութեան ու գիտութեանց մէջ կրթուեցաւ։ Երկու որդի ունեցաւ՝ Վրթանէս ու Արիստակէս։ Դառն տանջանքներով ու լուսաւոր վարդապետութեամբ կռապաշտ Հայերը քիչ առեներն քրիստոնեայ ըրաւ, 301ին։ Այս միջոցին նահատակուեցան Ս. Հռիփսիմեան կուսանք։ Կեսարիոյ Ղեւոնդիոս Եպիսկոպոսէն Հայոց Հայրապետ ձեռնադրուելէն ետք, Ս. Գրիգոր գրեթէ 25 տարի նորադարձ հօտը իմաստութեամբ կառավարեց։ Վերջապէս ծերութեան պատճառաւ Հայ Եկեղեցւոյ հոգեւոր իշխանութիւնը յանձնելով իր Արիստակէս որդւոյն՝ Մանեայ այրը առանձնացաւ և հոն վախճանեցաւ 325ին։

Մեր Լուսաւորիչը կը տօնենք տարին երեք անգամ — Մուտն ի վիրապն, Ելն ի վիրապէն, Գիւտ Նշխարաց։



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

28. Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Մեծն Ներսէսի որդին էր Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը որ կ. Պոլսոյ մէջ ծընաւ։ Իր հօրը հոգածութեամբ շատ զարգացաւ և իր ժամանակակից գիտուններէն մէկը եղաւ։ Կղերականութիւնը ընդունեց ու Հայոց բարիք ընելու նպատակաւ քովը աշակերտներ ժողվելով՝ սկսաւ անոնց ուսումնական ու բարոյական կրթութեանը պարապիլ։ Իրեն կ՚աշխատակցէր Ս. Մեսրոպ Մաշթոց վարդապետ որ Ս. Մեծն Ներսէսի աշակերտներէն էր ու մանկութենէն կը ճանչնար։ Ս. Սահակ կաթողիկոս 50 տարի վարեց կաթողիկոսութիւնը։ Ս. Մեսրոպ Ս. Սահակին հետ Հայոց լուսաւորութեան աշխատիլ սկսաւ։ Մինչեւ այն ատեն Հայ Եկեղեցիներուն մէջ տեղ մը Ասորերէն, տեղ մը Յունարէն կը կարդացուէր՝ Հայերէն գիր չըլլալուն համար։ Ս. Մեսրոպ և Ս. Սահակ ուրիշ գիտուններու ձեռնտուութեամբ երկար ատեն աշխատելէ ետք, վերջապէս գտան, 413ին։ Հայոց գիրերուն 1500 ամեակը տօնեցինք 1913ին, Ս. Սահակի, Ս. Մեսրոպի ու իրենց աշակերտներուն ձեռքով Հայերէնի թարգմանուեցաւ Ս. Գիրքը։ Այս երկու սուրբերն ալ Հայ Եկեղեցւոյ ժամերգութիւնը ճոխացուցին։



Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ



29. ՊԶՏԻԿ ՉԱՐԱՃԱԻՆ

Էհ, ի՛նչ ընեմ ձեռքըս չէ,
Խելօք նստիլ ու կարդալ.
Քիչ մը խօսիլ ու խնդալ
Կարծեմ սակայն գէշ բան չէ։

Լո՛ւռ, գանգակը կը զարնէ,
Պէտք է նստիլ, աշխատիլ,
Օրիորդըս հո՛ն կեցեր է,
Պէտք չէ խնդալ ու խօսիլ։

Կը պատժեն գիս, կը սաստեն,
Խօսիլը լաւ չէ՝ կ'ըսեն.
Բայց ի՛նչ ընեմ, ներեցէ՛ք,
Լուռ նստիլը ձեռքըս չէ։

---

30. ԵՂԵՒԻՆ

Ով եղեւին հսկայ դու ծառ,
Զի սիրեմ քո գեղ դալար.
Երբ թափթփէ ձմրան քամին
Ծառոց թերթն ի գետին,
Դու հսկայ ծառ կանանչազարդ,
Միշտ կը պահես քոյին գարդ։

Այս մանկական հանդէսին օր
Ով զարդարեց քեզ աղուոր,
Խաղալիքներդ, մխիթարդ անոյշ
Ո՞ր ձեռք կախեց հոդ քնքոյշ
Ոհ բեզ սիճնող ձեռքերուն տակառ
Ես չերմագին տամ համբոյր։

Ով գեղեցիկ իմ եղեւին
Զի քաղցր է քո հովանին.
Մշտադալար քու խիտ ոստեր
Որոնք թռչնիլ չեն գիտեր,
Երկնապարգեւ լո՛յս հաւատքիս
Քաղցրիկ պատկերն ես աչքիս։

---

31. ՏՕՆ ԿԱՔՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հոգեգալուստէն ետքը Բ. կիրակին կը տօնուի Հայոց առաջին եկեղեցւոյ հիմնարկութիւնը Էջմիածնի մէջ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով 303ին, որուն հազար վեց հարիւրամեակը մեծ հանդէսներով տօնեցինք 1913ին։ Այս տօնը մեծ նշանակութիւն ունի ո՛չ միայն Հայոց եկեղեցական պատմութեան մէջ, այլ նաև բովանդակ քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան մէջ։ Հայոց եկեղեցին Արեւելեան քրիստոնէութեան ամէնէն հին հաւատարիմ հաստատութիւններէն է և պահպանած ու տարածած է քրիստոնէութիւնը իր շրջակաները։ Այս տօնը կը կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորչի «ելն ի վիրապէն» տօնէն մէկ օր ետքը։ Այդ օրը կ'երգենք «Էջ Միածինն ի հօրէ» շարականը զոր ամէն Հայ Քրիստոնեայ գոց գիտնալու է։

ՀԱՆԵԼՈՒԿ

Դիպալ մը ներկ է,
Աշխարհ կը ներկէ։

(Առեւ)



32. ԱԳՌԱԻԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Գիշերն աշնայնի
Երբոր կը հասնի,
Մրթնեն դաշտ ու ծառ,
Սեւ ագռաւն արթուն
Նողկանք տայ մարդուն
Երգելով՝ «կ՚առ, կառ...»։

Ինչ տրգեղ թըռչուն.
Մացառէ մացառ
Սուրայ ոսոտոտուն
Ու կ՚երգէ. «կա՛ռ, կառ...»։



33. ԲՈՅՍԵՐԸ

Բոյսերը կ'ապրին, կեանք ունին։ Հունտէ յառաջ կուգայ բոյսը. կ'աճի հողէն՝ անունդ քաղելով, և օր մըն ալ կը ծերանայ ու կը չնչուի։

Բոյսերուն կազմուածքը սապէս է. հողին մէջ մաս մը ունին որ արմատ կը կոչուի, արմատէն վեր հողին վրայ կանգնած մասը ցողուն կ'ըսուի, ցողունին ու անոր ճիւղերուն վրայ տերեւներ կան, ծաղիկը կը գտնուի տերեւներուն մէջտեղ։

Խոշոր տուննկերը կը կոչուին ծառ, ինչպէս՝ խնձորենի, սեւելի պզտիկները՝ թուփ, ինչպէս՝ վարդենի։ Թուփերուն և ծառերուն բունը դրսէն հաստ կեղեւ մը ունի. անկէ ներս է փայտը որ տարիքին համեմատ հաստ կ'ըլլայ. կեդրոնը կակուղ է և ուղեղ կը կոչուի։ Երբ բուն մը լայնքէն կտրենք, կեդրոնին բոլորտիքը փայտը խաւ ի խաւ կազմուած պիտի տեսնենք. այդ խաւերը, այսինքն՝ թուխ գիծերը համրելով՝ ծառին տարիքը կրնանք գիտնալ։

Բոյսերը արմատներով, ցողունով ու տերեւներով շնչառութիւն կ'ընեն։

---

34. ԲՈՅՍԵՐԸ ՍԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՈՒՆԻՆ

Ծաղիկ բացօդներ { Երկբլթակներ՝ լուբիա
Միաբլթակներ՝ ցորեն

Ծաղիկ չբացօդներ Սունկ

Բլթակ. երբ լուբիայի հունտը քննենք, կը տեսնենք որ հունտը մաշկով մը պատած է, մաշկը վերցնելով՝ կ'ունենանք երկու կէս լուբիա որոնք իրարու կցուած են մասով մը։ Երկու կէսերը կը կոչուին բլթակ, պահոնք կցող մասն ալ՝ սաղմ։ Հունտին այն մասն է սաղմը որ երբ ծլի, արմատի, ցո-

ղունի ու տերեւի կը փոխուի։ Մէկ բլթակ ունեցողը կը կոչուի միաբլթակ, ինչպէս՝ ցորեն, արմաւ, երկու բլթակ ունեցողներն ալ՝ երկբլթակ, ինչպէս՝ նուշ, կաղին, եւն։

35. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ԲՈՅՍԵՐ



Բանջարեղէններէն շատերուն արմատը կ'ուտուի, ինչպէս՝ շողգամ, ստեպղին, կանկառ, բողկ, ոմանց տեսակները եփելով՝ կ'ուտենք, ինչպէս՝ կարտամբ, շումին, պրաս. շատերն ալ առանց եփելու կ'ուտենք, ինչպէս՝ ազատաքեղ, եղերդ, հազար, որոնցմէ աղցան կը շինուի։

Կան ուրիշ բանջարեղէններ ալ որոնց հատիկները կ'ուտուին, ինչպէս՝ լուբիա, սիսեռ, ոսպ, մաշ։

36. ՅՈՐԵՆԸ, ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ

Յորենը մարդոց սնունդին համար ամէնէն կարեւոր հացաբոյսն է։ Յորենը կը ցանուի կա՛մ աշնան վերջերը և կա՛մ գարնան սկիզբները։ Գարնան ցորենը կ'աճի, ամառ ատեն կը հասունանայ, հասկեր կը կապէ։ Ամառ ատեն հասկերը կը դեղնին. ցորենին հատիկները եղած են. կը հնձեն գանոնք և կը ժողվեն շտեմարաններու մէջ։



Յորենի հասկերը կալին մէջ կը ծեծեն և յարդը կը զատուի հատիկներէն։ Յորենը ջրաղացին մէջ կ'աղան և ալիւր կը պատրաստեն։ Ալիւրը բարակ մաղէ կ'անցնեն և թեփը կ'ելլէ։ Բարակ ալիւրէն հաց կը պատրաստուի։

Գետնախնձորն ալ շատ կարեւոր տունկ մըն է, աշնան արմատները հողին տակէն կը հանեն, չոր ու մութ տեղեր կը դիզեն։



37. ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՅՍԵՐ, ԹՈՒՆԱՒՈՐ ԲՈՅՍԵՐ


Բժշկական բոյսերը անոնք են որ իբր դեղ կը գործածուին, ինչպէս՝ անանուխ, մոլոշ, տուզտ։ Ասոնք կը ժողվեն, կը չորցընեն, յետոյ կը խաշեն ջուրը խմելու համար, կամ կը փշրեն փոշին գործածելու համար։

Բոյսեր ալ կան որ թոյն կը պարունակեն, ասոնց կ'ըսուի թունաւոր բոյսեր, ինչպէս՝ մոլեխինդ, շանլուիկ, ևլն։

Բուրաստանի մէջ կը մշակուին յարգի ծաղիկներ՝ վարդ, շահպրակ, մանիշակ, շահոքրան, շուշան, յակինթ, քրքում, նարգիս։

38. ՄԻՄԵՌՆԱԿ

Մարտն անցաւ, եկաւ ապրիլ գեղեցիկ,
Հեռու տեղերէ դարձաւ ծիծեռնիկ,
Օ՛, բարի եկա՛ր, Գարնան կարապետ,
Բոյն շինողներուն ամէնէն վարպետ։
Փախաւ կռունկը, թռաւ վերերէն,
Սոխակը հեռացաւ մեր պարտէզներէն։



Միայն դուռ մնացիր ճնճղուկներուն հետ,
Սիրուն ծիծեռնակ, Գարնան կարապետ։
Պատուհանիս մէջ շինէ քուռ բոյնը,
Անուշ ձայնովդ երգէ գարունը.
Զուռ ածէ, հանէ՛ գեղեցիկ ձագերը,
Մեր քովը կեցիր մինչև սեպտեմբեր։

39. ԲԱՐԻՔՈՎ ՉՈՒԱՐՃԱՆԱԼ

Չարեհ հարուստ ընտանիքի մը զաւակն էր։ Ամառ օր մը իր դաստիարակին հետ դաշտերը պտտած միջոցին մացառի մը տակ զոյգ մը կօշիկ տեսաւ, զոր հոն մօտերը աշխատող աղքատ մշակ մը ձգեր էր։ Տղան ուզեց այդ կօշիկները առնել պահել գործաւորին խաղ մը ընելու և անոր յուզմունքը դիտելով՝ զուարճանալու համար։ Բայց դաստիարակը ըսաւ իրեն. «Աւելի ազնիւ միջոց մը ընտրէ զուարճանալու։» Եւ խրատեց որ փոխանակ այդ կօշիկները վերցնելու՝ քանի մը ղրուշ դնէ անոնց մէջ։ Տղան հնազանդեցաւ։ Քիչ մը ետքը գործաւորը եկաւ կօշիկները հագնելու, և մէջի ղրամը տեսնելով՝ ուրախութենէն յուզուեցաւ, ծունկի վրայ եկաւ ու շնորհակալ եղաւ Աստուծոյ այս անակնկալ օգնութեան համար։ Չարեհ հեռուէն զայն դիտելով՝ անկէ շատ աւելի երջանիկ եղաւ, որովհետեւ ինք եղեր էր այդ երջանկութեան պատճառը։

ԱՌԱԾ

Լայնին ճար կայ, նեղին ճար չկայ։
Խօսքը՝ մեծին, ջուրը՝ պզտիկին։

40. ՀԱՅՐ ՄԵՐ

Մեզի պէս փոքրերուն
Պաշտպանը դու ես, Տէ՛ր,
Քեզմով է որ հեռուն
Կ'երթան ցաւ փորձանքներ։

Դու ես որ ամէն օր,
Մեր հացը կուտաս մեզ.
Ու նման գթոտ մօր,
Մեր վրայ կը հսկես։

Սիրեցէք միշտ գիրար,
Կ'ըսես մեզ, ով Աստուած,
Ու փոխան քու գիրկդ,
Ցոյց կուտաս մեզ ժպտած։

---

41. ՕԳՏԱԿԱՐ ՇՈՒՆԸ

Կայծակ է իմ շունիս անունը։

Ան շատ հաւատարիմ պահապան շուն մըն է։

Կայծակ քեզի չհաջեր։

Հայրիկին թերթը բերանը՝ կ'ընկերանայ անոր։

Կայծակ շատ օգտակար է մեզի։
Միշտ պատրաստ է օգնելու։
Օր մը պուպրիկս կորսընցուցի։
Փնտռեցի բայց չկրցայ գըտնել։



Վերջապէս ըսի, «Կայծակ, կրնա՞ս պուպրիկս գտնել»։
Ան մինչեւ լճակը վազեց, գնաց։
Երբ վերադարձաւ՝ տեսայ որ պուպրիկս բերանը բռնած ինծի կը բերէր վազելով։
Պուպրիկս բերաւ և կամացուկ մը գետին դրաւ։
«Շնորհակալ եմ, հաւատարիմ Կայծակ,» ըսի անոր. կ'արժէր որ շնորհակալ ըլլայի անոր։
Հաճելի բան է տեսնել անոր պոչ շարժելը երբ ես «Շնորհակալ եմ,» կ'ըսեմ անոր։

42· ԿՈՐՍՈՒԱԾ ՀՈՐԹ

Ջիւնը կուգար փաթիլ փաթիլ,
Չեռն ալ անձրեւ կաթիլ-կաթիլ,
Այդ միջոցին մէկ պառաւ կին
Հորթ մը վնտռէր ի մէջ դաշտին։
Կովը եկաւ երբ արօտէն,
Կուրծքն ու ծիծեր լեցուն կաթէն,
«Հորթուկս ո՞ւր է» ան բառաչեց,
Խեղճ պառաւին ցաւ պատճառեց։



Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Կ'արտասուէին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց բարակ մի ձայն,
Կովը իմացաւ որ հորթն է այն։
Կովը վազեց բառաչելով,
Պառաւը եռեւէն տրքտրքալով.
Կորսուած հորթը մայրը գտաւ,
Լեցուն ծիծը բերանն առաւ։
Ծծեց բոլոր կաթն ու հատցուց,
Մեր պառաւին բան չթողուց.
Բայց պառաւը այս անգամին,
Սիրով ներեց չար հորթուկին։

43. ՅԱՋՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Յակոբ և Պետրոս, երկու գիւղացիներ, օր մը բանջարանոցի մը քովէն կ'անցնէին՝ գլուխ գլխի խօսակցելով իրարու հետ։ «Նայէ, ըսաւ յանկարծ Յակոբ իր ընկերոջը, սա՛ կաղամբները որքա՜ն խոշոր են։—Ատոնք ալ բա՞ն են, պատասխանեց Պետրոս հեգնութեամբ. ես անանկ կաղամբ մը տեսած եմ որ մեր գիւղին գանգակատան չափ կար»։ Յակոբ որ կաթսայագործ էր՝ ուզելով անոր բերնին չափը տալ, անմիջապէս ըսաւ. «ես ալ ժամանակաւ մեր եկեղեցւոյն չափ կաթսայ մը շինած եմ։—Բայց այդ ահագին կաթսան ինչո՞ւ համար շինել տուին։—Կաղամբդ մէջը եփելու համար անտարակոյս», յարեց սրամիտ երիտասարդը։

---

44. ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Հարուստ իշխան մը որսի ելած ըլլալով՝ հանդիպեցաւ ծեր մարդու մը որ ընկուզենի մը կը տնկէր։ «Զարմա՜նք, ըսաւ իշխանը, այդ ծերուկը կը կարծէ թէ պիտի վայելէ նորատունկ ծառին պտուղները։» Ծեր մարդուն մօտեցաւ և հարցուց թէ քանի՞ տա-

բեկան է։ Ծերունին պատասխանեց. «Ութսուն տարեկան եմ. փա՛ռք Աստուծոյ։»— Իշխանը յարեց. Դեռ քանի՞ տարի կ'ուզես ապրիլ որ մատաղ ծառեր կը տնկես։—Ծերունին պատասխանեց. Քանի որ մենք մեր հօրը աշխատանքը կը վայելենք, պէտք չէ՞ որ մեր ապագայ սերունդն ալ վայելէ մերինը։»

«Հայրը կը ցանէ, որդին կը հնձէ։»

Իշխանը այդ պատասխանին հաւնելով քուռ մը ոսկի պարգեւեց ծերուկին։—Ո՞վ կրնայ ըսել, աւելցուց ծերուկը, թէ մատաղ տունկին արդիւնքը չվայելեցի»։

---

45. ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

ՎԱՐԴ




Ջիս ամէն մարդ կը կոչէ
Ծաղիկներու թագուհի,
Որովհետեւ իմ ծաղիկս
Սիրուն գոյն ու հոտ ունի։

Թէև կանաչ իմ թուփը
Շատերու ձեռքը կը ծակէ,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամէ մարդ կը ներէ։

ՇՈՒՇԱՆ

Իմ սպիտակ կոկոնի
Մէջ կան բուրմունք շատ ու շատ,
Ոսկեծման նուրբ փոշի
Մեղուներու բաղմաշխատ։

Իմ ցողունս է խիստ բարակ
Եւ զագաթս գեղեցիկ,
Տերեւներս ընդարձակ,
Իսկ ես ինքս շատ հեզիկ։




46. ԳԻՒՂԱԿ ԵՒ ԳԻՒՂ

Թէ՛ գիւղակին և թէ՛ գիւղին մէջ գեղջկական շատ տուներ կան։ Գիւղակը մէկ եկեղեցի, իսկ գիւղը մէկ կամ երկու եկեղեցի կ՚ունենայ։ Թէ՛ գիւղակին և թէ՛ գիւ-

ղին մէջ փողոցները քիչ են և եղածն ալ ծուռ ու մուռ է։ Հայ գիւղերու տուները փոքր են, առ հասարակ գիւղացին իր խրճիթին մէկ մասը գետնին տակ կը շինէ և պատերն ալ ցեխով կը ծեփէ։ Քարաշէն տուներ հազուագիւտ են գիւղերու մէջ, գիւղացին իր խրճիթը կը ծածկէ հողով։ Գիւղին մէջ կան կալեր, անասուններու յատկացուած ընդարձակ տեղեր, պարտէզներ ու այգիներ։ Այս վերջիններուն ցանկապատ կ'ըլլան։ Գիւղացին իր սայլին գլուխը նստած, մտրակ մը ձեռքը իր եզը ու գոմէշը կը քշէ։ Երբեմն ալ իր գերանդին ուսին վրայ, մանգաղը ժէջքը, կա՛մ հունձքի կ'երթայ, կա՛մ հունձքէն կը դառնայ։ Գիւղակին ու գիւղին բնակիչները գլխաւորապէս հողագործութեան ու անաս-







նաբուծութեան կը պարապին։ Կան ալ այն-պիսի տեղեր որ աւելի քաղաքակրթուած են և ունին շատ գործարաններ. սոնք կը կոչուին գիւղաքաղաք։ Հոս տուներն աւելի գեղեցիկ են, քարաշէն բնակարաններ ալ կան։

---

47. ԱՂՕԹՔ ԸՐԷ՛

Աղօթք ըրէ՛, փոքրիկ աղջի՛կ,
Երբ արթննաս առտուն կանուխ,
Եւ իրիկուան մութը սաստիկ
Երբ տարածէ իր քօղը թուխ։


Ընձիդ համար երբ աղօթես,
Աստուածմէ խելք ուզէ՛ միայն.
Որ ծնողքըդ սիրեն գքեզ,
Երբեք քեզմով դժբախտ չըլլան։

Աղօթք ըրէ՛ հիւանդներուն
Եւ որբ տըղոց համար անգօր.
Աղօթքիդ մէջ միշտ խնդրէ՛ դուն
Որ Հայրենիքդ ըլլայ հզօր։

---

48. ՊԱՅՏ

Հարուստ գիւղացի մը տղուն հետ քաղաք կ'երթար։ «Աչքդ բա՛ց, կարապե՛տ, ըսաւ հայրը, ճամբուն վրայ պայտ մը ինկած է, վեր ա՛ռ»։—«Է՛հ, հայրի՛կ, այս չնչին բանին համար ծռիլ կ'արժէ՞» պատասխանեց կարապետ։ Հայրը ձայն չհանեց, ինքը պայտը վերցուց ու պարկին մէջ դրաւ։ Ճամբան պայտը մէկ դահեկանի ծախեց դարբինի մը և այդ ստակով բալ գնեց։ Օդը տաք էր, կարապետ ծարաւէն կը տանջուէր և հազիւ հօրը ետեւէն կրնար երթալ։ Յանկարծ հայրը իրրև թէ անգիտաբար բալ մը ձգեց։ Կարապետ իսկոյն վերցուց զայն, կերաւ և քիչ մը զովացաւ։ Հետզհետէ հայրը բալերը վար ձգեց և կարապետ ծռելով՝ շարունակ զանոնք կը հաւաքէր և կ'ուտէր։ Հայրը ըսաւ. «Կը տեսնե՞ս, զաւա՛կս, եթէ մէկ անգամ պայտին համար ծռէիր, այսքան անգամ չպիտի ծռէիր բալերուն համար։ Ա՛ս քեզի իրատ ըլլայ որ ուրիշ անգամ ծուլութիւն չընես։»



51. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԹԻԹԵՌԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

—«Եթէ օդը գեղեցկանայ»,
Կ'ըսէր թիթեռ մը սիրունիկ,
«Եթէ օդը գեղեցկանայ,
Դաշտերուն մէջ՝ հեզիկ հեզիկ՝
Պիտի խաղամ մարգին վրայ»։

—«Ու ես», ըսաւ մեղուն քովէն,
«Պիտի իմ գործս շարունակեմ,
Եթէ օդը գեղեցկանայ»։

49. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՎԷՃԸ

ԱՄԷՆ ԻՆՉ ՕԳՏԱԿԱՐ Է

Կովը, Զին ու Շունը կը վիճաբանէին իրարու հետ թէ Տանտէրը իրենցմէ ո՞րը աւելի կը սիրէր։

—«Հարկաւ զիս ամէնէդ աւելի կը սիրէ, ըսաւ Զին. ես անոր արօրը ու ցաքանը կը քաշեմ, անասուններէն անոր փայտ կը բերեմ, շատ անգամ վրաս կը հեծնայ և քաղաք կ'երթայ։

—Ոչ, մեր տէրը զիս աւելի կը սիրէ, ըսաւ Կովը. քու ըրածդ ի՞նչ է որ մեծ մեծ կը ջարդես, ատոնց մեծ մասը իմ եղբայրս եզն ալ կրնայ ընել, իսկ ես անոր բոլոր ընտանիքը կաթով կը կերակրեմ։

—Դուք երկուքդ ալ կը սխալիք, ոռնաց Շունը, մեր տէրը զիս ամէնէդ աւելի կը սիրէ, որովհետեւ անոր բոլոր հարստութիւնը կը պահպանեմ։»

Կենդանիներուն տէրը այս վէճը լսեց ու ըսաւ անոնց. «Ի զուր մի՛ վիճիք իրարու հետ։ Դուք ամէնքդ ալ ինծի պիտանի էք և ձեզմէ իւրաքանչիւրը լաւ է իր տեղը։»

50. ՄԱՐԴՈՒՆ ՀՄՏՈՒԹԻՒՆԸ

Գիշատող գազանը իրեն համար որջ կը պատրաստէ անտառին մէջ, թռչունը բոյն կը կազմէ, մկնջան ալ ծառին մէկ ճեղքին մէջ կը տեղաւորուի։ Անոնց ամէնքն ալ ցրտին դէմ իրենք զիրենք կը պաշտպանեն, որը՝ իր սեփական բուրդով, միւսը՝ փետուրով, իսկ երրորդը՝ հաստ վերնամաշկով։ Մարդս այս բնատուր զգեստները չունի, բայց օժտուած է խելքով որուն օգնութեամբ ամէն բանի հնարը կը գտնէ։ Անտառ կ'երթայ, ծառերը կը կտրէ, անոնցմով իրեն համար տուն կը շինէ։ Հոդին տակէն երկաթ կը գտնէ որով իրեն կացին, բահ, աւօր և ուրիշ գործիքներ կը շինէ։ կաւէն ադիւս և ադիւսէն տուն կը շինէ, խրճիթին բացուածքը, երբեմն ալ պատերու ծակտիքը կը գոցէ։ Աւազը հալեցնելով՝ ապակին գըտաւ։ Լուսամուտին վրայ ապակին անցընելով՝ լոյսը թափանցել կուտայ, արգիլելով հանդերձ որ քամին տունէն ներս չմտնէ։ Վուշ ու բամբակ ցանեց, անոնցմով թել մանեց, քթան գործեց, շապիկներ ու բաճկոններ պատրաստեց։ Այծի պրօնէն ու ոչխարի բուրդէն ցվիսի ու ասուիներ գործեց և գազաններուն մորթերէն՝ իրեն համար տաք մուշտակներ։



52. ՁԻՆԱՄԱՐԴԸ

Ձմեռ էր։ Փողոցներուն և հրապարակներուն մէջ ձիւնը դիզուած էր։ Տղաքը ուզեցին տեսնել թէ անիկա որչափ խոր էր։ Անոնք ձիւնին մէջ գացին. և ահա ձիւնը անոնց կօշիկներուն բերանէն ներս կը լեցուէր։ «Այսօր ձիւնամարդ մը շինենք», պոռացին Սուրէն, կարապետ և Գրիգոր։ Անոնք շուտ մը մեծ ձիւնագնդակ մը շինեցին ու զանիկա ասդին անդին գլորեցին ձիւնին մէջ։ Քիչ առեն գնդակը այնչափ մեծցաւ որ տղաքը զանիկա ա՛լ յառաջ չէին կրնար տանիլ։ Հիմա անոնք ուրիշ գնդակ մը գլորեցին ու զանիկա առաջինին վրայ դրին։ Երքը ասոր վրայ դրին ուրիշ աւելի պզտիկ գնդակ մը, որ ձիւնամարդուն գլուխը եղաւ։ Գրիգոր ձիւնամարդուն գլխուն

մէջ երկու կտոր ածուխ տեղաւորեց, և աւտնք եղան անոր աչքերը։ Նոյնպէս ածուխէ շինեցին անոր քիթը, բերանը և վերարկուին կոճակները։ Վերջապէս շինեցին անոր երկու թեւերը, և թեւերէն մէկին մէջ ալ դրին գաւազան մը։

Գիրուկ ձիւնամարդը թէև գաւազան ունէր, բայց չէր կրնար գարնել։ Խեղճը փախչիլ ալ չէր կրնար, երբ տղաքը անոր վրայ ձիւնագնդակ նետէին։ Եւ ահա ամպերու մէջէն յանկարծ վայլեցաւ արեւը. և ձիւնամարդը սկսաւ լալ։ Արցունքները անոր երեսէն ի վար, ճերմակ վերարկուին վրայ կը թափէին։ Ձիւնամարդը լալը դադրեցուց, երբ արեւը իր երեսը ծածկեց ու վերջապէս մարը մտաւ։

Եթէ այսօր արեւը աւելի երկար տաեն փայլէր, մեր գիրուկ ձիւնամարդը լալէն պիտի նիհարնար ու հալէր, հատնէր։

---

53. ԾՈՒՂԱԿԸ

Շատ մը մկնիկներ միասին կը խաղային, անհոգ և ուրախ։ Ունէին փայլուն գորշ մորթ և երկանկէկ պեխեր։

Առտու մը մաման կանչեց զիրենք ու ըսաւ.



—Տիկ ըրէք, ձագո՛ւկներս, ձեզի խըրատ մը պիտի տամ։ Մարդիկ մեզ կ'ատեն. տուներու մէջ կատու կը պահեն որ մեզ ուտէ, ծուղակ կը լարեն որ մեզ բռնէ։ Զգո՛յշ կեցէք, չըլլա՛յ որ փորձանքի հանդիպիք։ Փախէ՛ք մանաւանդ ծուղակներէն։

Մկնիկները խօսք տուին մամային խըրատը պահելու։

Անոնցմէ մէկը որ միւսներէն աւելի անվախ էր, օր մը հեռացաւ քիչ մը իրենց ծակէն։ Յանկարծ անկիւն մը աչքին հանդիպեցաւ ծուղակ մը։ Ուզեց գիտնալ թէ ծուղակը ի՛նչ տեսակ բան մըն է. կամաց

կամաց մօտեցաւ ու տեսաւ ծուղակին մէջ ապուխտի իւղոտ կտոր մը։

Իրաւ որ ապուխտը շատ անուշ կը հոտէր։ Մկնիկը փափաքեցաւ աւելի մօտէն հոտոտել զայն, քիչ մըն ալ առաջացաւ, յետոյ ետ գնաց, նորէն առաջացաւ և վերջապէս ապուխտին դպաւ։

Շրա՛խ... ծուղակը փակուեցաւ ու խեղճ մկնիկը բանտարկուեցաւ մէջը։

Ժամ մը վերջը տանտէրը եկաւ. բերաւ կատուն և բացաւ ծուղակին դուռը։

---

54. ԱՂՈՒԷՍ ՈՒ ԱՔԼՈՐ

—«Վարդավառի տօն է այսօր,
Իջի՛ր ծառէդ, սիրուն Աքլոր,
Ինձ հետ կարդա երգ, շարական,
Մատաղն օրհնենք տէրունական։»—
Աղուէսն այսպէս համոզիչ էր.
Աւսոր Աքլորը սապէս կ'ըսէր.
—«Սակայն, տես, նախ հարկ է, Աղուէս,
Որ ժամկոչի ձայն ձգեմ ես,
Ապա իջնել և ժամ երգել.

«Կուկուլիկ կո՛ւ, տօն է այսօր.
Սուրբ կարապետն է փառաւոր։»—
Աքլորիկին այս սուր ձայնէն
Շնիկն սթափ՝ հասաւ խածաւ,
Աղուէսը կ'ոռնար՝ վիրաւորուած,
Իսկ Աքլորիկ ծառին վերէն,
—«Աղուէ՛ս, կ'ըսէր ծիծաղելէն,
Այդ անճոռնի ձայնո՞վ պիտի
Երգէիր տօն վարդավառի։»—

55· ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Շատ ժամանակ առաջ Հրէաստանի մէջ բարեպաշտ ամուսին մը և բարեպաշտ կին մը կ'ապրէին։ Անոնց անունն էր Յովսէփ և Մարիամ։ Անոնք անգամ մը Նազարէթ քաղաքէն Բեթլէհէմ գիւղ գացին։ Ասիկայ երկայն ճամբայ մըն էր։ Երբ անոնք Բեթլէհէմ հասան, արդէն շատ մը օտարականներ կային հոն։ Անոր համար Յովսէփ և Մարիամ գիշերը պառկելու տեղ չգտնելով՝ ստիպուեցան ախոռի մը մէջ մնալ։ Եւ ահա հոն գիշերուան մէջ ծնաւ սիրելի Յիսուս Մանուկը։ Անոր մայրը Մարիամ զայն խանձարուրի մէջ փաթթեց ու մսուրի մը մէջ դրաւ. ինչու որ հոն ոչ անկողին կար, ոչ ալ օրօրոց։

Նոյն ժամուն հրեշտակ մը երեւցաւ պաշտին վրայ գտնուող հովիւներուն։ Հովիւները շատ վախցան. բայց հրեշտակը ըսաւ



անոնց, «Մի՛ վախնաք. ես ձեզի մեծ աւետիս մը կը բերեմ։ Այսօր փրկիչ մը ծնաւ։ Բեթլէհէմ գացէք, և հոն պիտի գտնէք Մանուկը։»

Եւ ահա հրեշտակին քով ուրիշ շատ մը հրեշտակներ երեւցան։ Անոնք սկսան երգել, «Երկնից մէջ Աստուծոյ փա՛ռք, երկրի վրայ խաղաղութիւն, և մարդոց մէջ հաճութիւն։» Երբ այս գեղեցիկ երգը լմնցաւ՝ հրեշտակները անհետացան։

Հովիւները իրարու ըսին, «Եկէք, Բեթլէհէմ երթանք, ու տեսնենք թէ հրեշտակին պատմածին պէս պատահած է։» Անոնք գացին ու հոն գտան Յովսէփը, Մարիամը և Յիսուս Մանուկը։ Ասոր վրայ խիստ շատ ուրախացան անոնք, և ծունկ ծռեցին ու Մանուկին երկրպագութիւն ըրին։ Ետքը նորէն տուն դարձան, և մեծ ուրախութեամբ պատմեցին իրենց տեսածը ու լսածը։



56. ՁԻՆԱՄԱՐԴԸ

Տեսէ՛ք, տղաք, գիրուկ ու ծեր
Զինամարդ մը հոն է կեցեր.
Իր գաւազանն որչա՜փ մեծ է.
Ձինք մի՛ ծաղրէք, ձեզ կը ծեծէ։

Բայց չի շարժիր կայնած տեղէն.—
Քիթն ու բերանն իրենչ տրգեղ են։


Սեւ ամպերէն ծագեց արեւ,
Ձիւնամարդուն տուաւ բարեւ.
Բայց ձիւնամարդն իսկոյն լացաւ.
Կարծեմ բռնեց իր փորին ցաւ։—
Հա՛, հա՛, հիմա հասկըցայ ես,
Դուն արեւէն վախցող մէկն ես։

Բարի արեւ, թուխ ամպերուն
Ներքև պահէ գլուխըդ սիրուն,
Որ կարագի պէս չը հալի
Մեր ձիւնամարդն հիանալի։—
Գրնաց արեւ. փրչեց ցուրտ հով.
Ձիւնամարդը գոհ էր սիրտով։

---

57. ՇՈՒՆԸ ԵՒ ԻՐ ՇՈՒՔԸ

Շուն մը իր բերանը ոսկորի խոշոր կտոր մը առած կ'երթար։ Ճամբան գետակի մը վրայ ձգուած կամուրջէ մը անցնիլ պէտք եղաւ։



Շունը վարը գետակին մէջ ուրիշ շուն մըն ալ տեսնել կարծեց։

«Այդ շունն ալ բերանը ոսկոր մը ունի, այդ ալ ես խլէի,» խորհեցաւ ագահ շունը ինքն իրեն։

«Այդ շունին վրայ հաջեմ ու վախցնեմ զայն,» ըսաւ ինքնիրեն ու հաջեց «հաւ, հաւ, հաւ։»

Բայց երբ կը հաջէր՝ ոսկորը բերնէն ջուրին մէջ ինկաւ, ու ա՛լ չտեսնուեցաւ։

Այդպէս շատակեր շունը իր ոսկորն ալ կորնցուց։

Ագահութեան օրինակ մը չէ՞ այս անխելք շունը։

Ագահութիւնը գէշ մոլութիւն մըն է։ Պէտք է զգուշանալ անկէ։

---


58. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Տըղան ըսաւ.—«Ա՛յ թռչնիկ,
Տե՛ս, ոսկեթել բովանդակ
Քեզ պատրաստեր եմ վանդակ,
Բընակարան երջանիկ։

«Ջորուկ կորեակ, թարմ բզրուկ,
Մամուռ մահիճ ծաղկազարդ,

Ամէն բան կան։ Հոն զըւարթ
Կեանք կը վարես անտադտուկ»։



Թռչնիկն ըսաւ.—«Պատանի՛,
Ամէնէն ճոխ վանդակին
Հետ չեմ փոխեր ես կրկին
Ծառն անտառին ընտանի.

Բնաւ բան չեմ բաղձար ես շատ։
Քու պալատիդ մէջ փարթամ
Ես բանտարկուած պիտ՝ ըլլամ։
—Կեանքը՝ ապրի՛ն է ազատ»։

Ա Ռ Ա Ծ

Կրակն որ Աստուած վառէ՝
Մարդս մարել չէ կարող.
Ճրագն որ Աստուած մարէ՝
Մարդս վառել չէ կարող։

59· ԱՔԱՂԱՂԸ, ԷՇԸ ԵՒ ԱՌԻՒԾԸ

Էշն ու առիւծը իրարու հանդիպեցան դաշտի մը մէջ՝ ուր արդէն աքաղաղ մը զբաղած էր ցորենի հատիկներ փնտռելու։

Էշը կը յուսար հոն աղուոր խոտ գտնել ճարակելու համար. առիւծն ալ որսի ետևէ էր։ Առիւծին համար, իրաւ, էշը շատ համով որս մը չէր, բայց լաւագոյն չգտնելով, պատրաստուեցաւ յարձակիլ հէք աւանակին վրայ որ արդէն վախէն կը դողդողար։ Այդ պահուն աքաղաղը մէկէն հնչեցուց սուր կուկուլիկու մը։ Առիւծը այս անսովոր ձայնէն սարսափած՝ սկսաւ փախչիլ։

Էշը տեսնելով առիւծին փախուստը, կարծեց թէ առիւծը իրմէ՛ վախցաւ ու կը փախչի։ Ինքզինք երեւակայեց ահաւոր կենդանի մը, առիւծին ետեւէն ինկաւ և սկսաւ պոռալ։

—Վա՛խկոտ, վա՛տ, ինչո՞ւ կը փախչիս։

Առիւծը որ ա՛լ աքաղաղին ձայնը չէր լսեր, յանկարծ կեցաւ, գլուխը դարձուց, և զարմացաւ տեսնելով ինքզինք խեղճ իշուկէ մը հալածուած։ Իսկոյն նետուեցաւ մեր անխելք աւանակին վրայ, զանի գիշատեց և փառաւորապէս լափեց։



60. ԼԱԼԿԱՆ ՊԷՊԷՆ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Դէ՛, դէ՛, տան, տա՛ն, պօ՛, պօ՛, թէ՛...
Կը ճըրճըրայ Արշաւիր,
Մարդուն սիրտը կը ճաթի.
Թէ կրնաս՝ բան հասկցիր։

Ձո՛ր, ճո՛ր, պա՛ր, պա՛ր, հո՛ պապալայ...
Օրրէ՛, երգէ՛, յոգնէ՛ դուն,
Պէպէն կուլայ ու կուլայ
Ճըրճըրալով, միշտ արթուն։

Ի՛նչ գլխու ցաւ, ի՛նչ փորձանք,
Ահա նորէն կը ճըչէ,
Գիշեր, առաւօտ թէ ցերեկ,
Խեղթեցնալը բան մը չէ։

Քուբիկներըս իմ երկու,
Մագթաղինէն ու Շուշան,
Կը սիրեմ ես։ Թէ ինչո՞ւ՝
Նայեցէ՛ք, միշտ կը խընդան։





---

61. ԿՕՇԿԱԿԱՐԸ

Փողոցէ մը մի օր անցայ,
Խանութէ մը ներս նայեցայ.
Կօշկակարը ասեղն առեր
Հա՛ կը կարէր, կօշիկ կարէր.
Թափաթաքթիք, թխքաթաքթիք
Ահա՛ այսպէս շինէր կօշիկ։

Հերիւններով ծակեր բանար
Ներքանի վրայ մէկ վեր, մէկ վար
Ապա փայտէ գամեր կ'առնէր.

Ահա՛ այսպէս զանոնք գամէր.
Թափաթաքթիք, թիքաթաքթիկ,
Ահա՛ այսպէս շինէր կօշիկ.

Կաղապարին վրայ կը շարէր
Կաշեայ փոքր ու մեծ կտորներ,
Ու մեծ թելովն ասեղն առեր
Հա՛ կը կարէր, կօշիկ կարէր.
Թափաթաքթիք, թիքաթաքթիք,
Ահա՛ այսպէս շինէր կօշիկ։

---

62. ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ՛ ԸՆԵՐ

Մարիամ սեւ աչքերով, սեւ խոպոպիքներով սիրուն աղջիկ մըն էր։ Բայց անի թերութիւն մը ունէր. ժամանակէն դուրս բաներ կ՚ուտէր. և երբ անգամ մը շաքարամանին գլուխը անցնէր՝ շաքարի կտորները ամանէն իր բերանը կը ճամբորդէին արագ արագ։


Անի ասոր համար շատ անգամ պատիժ ընդունած էր։ Եւ թէև անի այս թերութիւնը առաջուան չափ շատ չէր գործեր, բայց չկրցաւ զանիկա բոլորովին թողուլ։

Անգամ մը երբ հայրիկը ու մայրիկը

դուրս գացած էին՝ Մարիամ տեսաւ որ դռանը գոցուած չէր, ու շաքարամանը դարանին մէջն էր։ Անի անմիջապէս սեղանը դռանին մօտ հրեց, ու անոր վրայ ելլելով՝ առաւ շաքարամանը։ Բայց ասիկա պարապ էր։ Անի դարձեալ վնտռտեց ու վերջապէս դարանին մէկ անկիւնը թուղթէ ծրար մը գտաւ, որուն մէջ ճերմակ փոշի մը կար։ Անիկա շաքարի կը նմանէր։

Մարիամ թրջած մատով այս փոշիէն շուտ շուտ բերանը տարաւ. և թուղթէ ծրարը նորէն դարանին մէջը իր տեղը դրաւ։ Քիչ մը ետքը Մարիամ իր անհնազանդութեանը համար զղջալ սկսաւ, երբ սաստիկ փորացաւ մը կը տանջէր զինքը։ Ու մինչ բարձր ձայնով կուլար, կը ճչէր, նեղս մտան իր ծնողքը։

Թէև անի իր յանցանքը խոստովանեցաւ, ու թէև հայրիկը անմիջապէս բժիշկ կանչեց, բայց դժբաղդաբար արդէն շատ ուշ էր։ Նոյն օրը՝ իրիկունը սաստիկ տանջանքներու մէջ իր հոգին աւանդեց խեղճ աղջիկը։ Անոր կերած փոշին մուկի թոյն է եղեր։



63. ՀՐԵՇՏԱԿԸ

Ինծի կ'ըսեն՝ «հրեշտակ մըն ես»։
Բայց ասկէ չեմ շփանար ես.
Գովեստի ձեւ է ատիկա,
Որուն բընաւ տեղի չըկայ։

Թէև պզտիկ եմ տակաւին,
Կը փափաքիմ ես սրտովին
Այդ անունին՝ սուրբ և աղուոր՝
Ըլլալ իրօք արժանաւոր։

Քաղցրաբարոյ ըլլալ կ'ուզեմ
Նաև գըւարթ ու ժըպտադէմ,
Միշտ հընազանդ ու բարեկիրթ,
Աշխատասէր ու գըթասիրտ։

Այսպէս կըրնամ երկրիս վրան
Հրեշտակներու ըլլայ նման,
Եւ անկէ ետք՝ երկինքն ալ՝
Իրաւցընէ հրեշտակ դառնալ։

64. ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Ինձմէ եօթը տարուս մեծ եղբայր մը ունէի։ Մեծ եղբայրս հայրիկիս հետ կ'աշխատէր միեւնոյն արհեստին մէջ։

Հայրս միեւակը չէր բաւեր մեր ապրուստին։ Այս պատճառաւ եղբայրս ալ ստիպուած էր անոր հետ աշխատիլ և գրկուիլ դպրոցէն։

Ամբողջ օրը տունէն դուրս՝ հայրիկիս խանութը կը մնար։ Քիչ անգամ միայն կը տեսնէի զինքը, բայց շատ կը սիրէի։

Անգամ մը հայրս խարազանով կը ծեծէր զայն սաստկօրէն։ Չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար բարկացած էր, բայց եղբօրս աղաղակները սրտիս կը դպչէին։

Չկրցայ դիմանալ։ Անմիջապէս առաջ նետուեցայ, բոլոր ուժովս գրկեցի եղբայրս, և աշխատեցայ որ զայն ծածկեմ իմ մարմնովս։

Հայրիկիս բարկութիւնը չէր մեղմացած տակաւին. անիկա շարունակեց զարնել, և հարուածները ինծի կուգային։

Բայց նորէն կեցայ, աշխատեցայ որ աւելի լաւ պաշտպանեմ եղբայրս, մինչև որ հայրս՝ իմ արցունքներէս յուզուած՝ ծեծը դադրեցուց և ներեց եղբօրս։

65. ՓՈՔՐԻԿ ՍՆԱՓԱՌԸ

Սընափառ մը կար փոքրիկ,
Հազիւ վեց էր իր տարիք.
Օր մը ըսաւ իր միտքէն՝
«Մեծ պարոն մ'եմ ես արդէն։»

Վեհ քայլերով գընաց ան,
Առաւ պապուն գաւազան;
Ես հօրը մեծ գլխարկին
Մէջ թաղուեցաւ կէսովին։

Երբ դուրս ելաւ՝ փողոցին
Քարերն իր տակ ցողացին.
Ան մեծ մարդեր բարեւեց
Իր տարիքովն հազիւ վեց։

Անցորդները փողոցին
Քահ քահ մըն է փրցուցին,
Ըսին. «Գլխարկ պատուական,
Ո՞ւր կը տանիս այդ տըղան։»

66. ՎԵՇԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Անգամ մը գիւղ ելած էի ու կը պտտէի խրճիթներուս շուրջը, գեղջուկներուն աշխատանքը դիտելով։

Յանկարծ, հիւղակի մը մօտ, տեսայ երկու գեղջուկ տղաք որոնք կը կռուէին իրարու հետ։

Տղոցմէն մէկը մեծ էր և զօրաւոր կ'երեւար, իսկ միւսը փոքր էր ու տկար։

Եւ սակայն, փոքր տղան էր որ կը յարձակէր ու կ'աշխատէր զարնել միւսին։ Մինչդեռ մեծը չէր զարներ, այլ կը ջանար անոր հարուածներէն խուսափիլ։

Երբոր կռիւը դադրեցաւ, մօտեցայ մեծ տղուն և հարցուցի.

—Եղբա՞յրդ էր քեզի հետ կռուողը։

—Ոչ, դրացի էր։

—Շատ չար տղայ մը կ'երեւայ։

—Այո՛, միշտ այսպէս գէշ կը վարուի բոլոր տղոց հետ։

—Բայց երբ քեզի կը զարնէր՝ ինչո՞ւ դուն ալ անոր չէիր զարներ։

—Ի՞նչպէս զարնէի. պատասխանեց գեղջուկ տղան, ես անկէ զօրաւոր եմ։

Վեհանձն տղայ մըն էր այս գեղջուկը։

67. ԱԳԱՐԱԿԸ



(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Արշալոյսին, ի ամէն օր,
Աքլորն, իր ձայնով հրզօր,
Իր հաւնոցին մէջ ագաւ
կ'երգէ, կ'երգէ՛ անընդհատ։

Մինչդ տատրակին քովիկ
Հաւր կ'ընէ վա՛գ, վա՛գ, վի՛կ,
Ու ճուտերն որ նոր ելան
կը ճլուան, կը ճլուճլուան։

Կատուները, իրենց կարգին,
Մլա՛ւ, մլա՛ւ կ'ընեն անձկագին։
Երբ խոզերը կը կանչեն,
Շուներն անդին կը հաչեն։

Գառնուկն իր ձայնով նիհար
կը մայէ, կը մայէ՛ յար.
Մինչդեռ բադը ծանրաշարժ
Քուա՛, քուա՛ կը պուռայ անվարժ։

Զորս անկիւնէն ախոռին
Համերգ մ'է հեշտ ու խորին.
Կը բառաչէ կովն. իսկ ձին
Կը վրընջէ առանձին։

Ետ չը մնալով միւսներէն՝
Կը ղուայ էշն ալ դաշնօրէն,
Եւ իր ձայնէն հաստ ու խոր
Կ'արթննան լեռ, դաշտ ու ձոր։

---

68. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մարդն անասուններէն բարձր է, որովհետեւ կրնայ մտածել թէ ի՛նչ բանը բարի և ի՛նչ բանը չար է։ Եթէ կատու մը հոմ մին թռղուկը կատուին առջեւ, կատուն կը գողնայ։ Չենք կրնար մեղադրել կատուն որ կը գողնայ, որովհետեւ ան մինակ իր փորը կշտացնելուն վրայ կը խորհի, ուրիշ բան չի հասկնար։ Եթէ կատուն միսը գողցաւ ու անպատիժ մնաց, շատ ուրախ կ'ըլլայ և ուրիշ անգամ նորէն կ'ընէ։ Բայց մարդը այնպէս չէ։ Տղայ մը եթէ ուզէ բան մը գողնալ, նախ չորս կողմը կը նայի, երբ ապահով ըլլայ թէ մարդ չի տեսներ գինք՝ կը

գողնայ։ Բայց գողնալէն ետքը սիրտը հանգիստ չի մնար, միշտ կը կասկածի, ներքին ձայն մը իրեն կ'ըսէ. «Գէշ բան ըրիր»։ Այս ներքին ձայնին խիղճ կ'ըսուի։

Երբ տղայ մը սուտ խօսի, բան գողնայ, մէկը գրպարտէ, այս խիղճը կը յանդիմանէ գինքը և տղան ինքն իրեն կը չարչարուի, եթէ ուրիշէն չյանդիմանուի իսկ։ Ազնիւ տղու մը դէմքը միշտ ուրախ ու համարձակ կ'ըլլայ. ընդհակառակը յանցանք գործող, սուտ ըսող, գողութիւն ընող տղու մը դէմքը միշտ կասկածոտ կ'ըլլայ, միշտ խոժոռ, բարկացոտ, վախկոտ։

---

69. ՇՈՒՆԸ

Իմ ազուո՛ր շընիկ, իմ շընի՛կ սիրուն,
Կայտառ ու աշխոյժ կենդանի մ'ես դուն.
Գիշե՛ր թէ յորեկ, առաւո՛ւ թէ իրիկուն,
Կը հրակես հօտին, կը պահես մեր տուն։

Վա՛յ, եթէ օտար մարդ կամ անասուն
Մօտենայ մեզի չար նպատակով,
Վրան կը վազես անմիջապէս դուն,
«Հասէ՛ք» կը գոչես, հա՛ւ, հա՛ւ հաչելով։

Կամ եթէ աղուէսն ուզէ խորամանկ
Գողնալու համար հաւ, բաղ կամ վառեակ
Անցնիլ գիշերանց մեր պարտէզին ցանկ,
Կը հանդիպ ու զայն կ'ընես ահաբեկ։



Իմ աղուորի՛կ շուն, իմ գեղեցի՛կ շուն,
Ունիս թաւ մազեր, աչքեր վառվռուռուն,
Վընաս չես իտար քեզ սիրողներուն,
Մեր հաւատարիմ պահապանն ես դուն։

Փոքրիկ մանուկներ քեզ շատ կը սիրեն,
Իրենց ձեռքովը քեզի կուտան կեր.
Կը շոյեն գլուխդ ու կը փայփայեն,
Արթո՛ւն պահապան, խորոտի՛կ ընկեր։

70. ԱԿՆԱԾԱՆՔ

Դաստիարակեալ ու հարուստ անձ մը կը խորհէր թէ ո՛չ միայն պարտական էր ջերմ ու երկիւղած սրտով երախտագէտ ըլլալ իր դաստիարակին որ լուսաւորած էր իր մանկական միտքը. այլև անոր արտայայտել հնազանդութիւն ու մեծարանք։ Օր մը դաստիարակին տան առջեւէն անցնելու առեն, իր սովորութեան համեմատ, խորին յարգանք յայտնեց։ Ասոր վրայ զարմացած հիւացին իր հետեւորդները։ Հարուստը յարեց. «Պարտքս է որ յարգանքով վարուիմ այս մարդուն հետ որ ինծի սորվեցուց մարդ ըլլալու միջոցը, և ասով բարձրանամ դաստիարակիս աստիճանին։ Ո՞չ ապաքէն ճըշմարիտ մեծութիւնը առաքինութեան մէջ է։»

ԱՌԱԾ

Մինչեւ որ ձին ձի ըլլայ,
Զիւն տէրը ի՞նչ կը քաշէ,

Մինչեւ տղան մարդ ըլլայ,
Վարժապետը ի՞նչ կը քաշէ։

71. ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ

Սիրուն մանրավէպ մը պատմեմ ձեզի, մտիկ ըրէ՛ք։ Ատենօք հարուստ ծեր կին մը կար, գաւակ չունէր։ Այս կինը կը քնակէր իր մեծ ագարակին մէջ որուն քովը պզտիկ գիւղ մը կար։ Հարուստ կինը տեսնելով որ իր օրերը մօտեցած են, կը մտադրէ իր բոլոր կալուածներն ու հարստութիւնը տալ այն գեղացի աղջկան որ ամէնէն համեստն է։

Ուստի օր մը լուր կը ղրկէ գիւղին բոլոր աղջիկներուն և զանոնք իր տունը կը հրաւիրէ ուրախ ժամանակ անցնելու, և կ՛իմացնէ թէ որո՛ւն որ հաւնի, զայն իրեն ժառանգորդ պիտի ընտրէ։ Գիւղին բոլոր աղջիկները՝ կուգան, շատ գեղեցիկ, գոյնզգոյն շրջազգեստներ հագած, գլուխնին սիրուն գլխարկներ, գլխարկներնուն վրայ գոյնզգոյն փետուրներ և արուեստական ծաղիկներ։ Ամէնքն ալ սրահին մէջ մտած ժամանակ կ՛երթան մեծ հայելիին առջեւ ինքզինքնին կը դիտեն ու նազերով կը պտտին։ Անոնց հետ, ամէնուն ետեւը, կայնած էր վարդուհի։ Միջահասակ, շէկ մազերով սիրուն աղջիկ մը՝ որ հագած էր պարզ շրջազգեստ մը, գլուխը դրած էր հասարակ գլխարկ մը,

վրան դեռ նոր քաղուած վայրի կապոյտ ծաղիկներու պզտիկ փունջ մը կար։ Վարդուհի չէր համարձակեր հայելիին մօտենալ, կ'ամչնար, կը դիտէր իր սիրուն ընկերները, բայց չէր նախանձեր, իսկ անոնք իր երեսը անգամ չէին նայեր, այնքա՛ն խեղճ հագուած էր անիկա։

Կինը այս համեստ աղջի՛կը իրեն ժառանգորդ ընտրեց։

72· ՄԵԾ ՄԱՆՉ ՄԸՆ ԵՄ

Անցած տարի ստուգապէս
Փոքր էի դեռ.. բայց քանի որ
Կարդալ գրել գիտեմ այսօր
Զափահաս մեծ մանչ մըն եմ ես։

Մօրըս ծունկին վրայ, հերու՝
Կը տեսնէին զիս միշտ նստած.
Փոքր էի դեռ ես անկասկած,
Բայց ալ եղած եմ վեց տարու։

Հիմա կը կարդամ գիրք ու քարտէս,
Կը սորվիմ շատ դասեր դժուար.
Պայուսակս ալ՝ ձախ ուսէս վար՝
Կ'ըսէ թէ մեծ մանչ մըն եմ ես։

Մըտիկ կ'ընեմ վարժապետին
Խօսքերն ու միտք կը պահեմ յաւ.
Եւ ինչ շատ գոհ է հարկաւ
Որ աչքերն ինձ միշտ կը ժպտին։

---

73. ԽՆՁՈՐԵՆԻ ՄԸ

Ա.

Անտառին մէջ կ'աճէր վայրի խնձորենի մը։ Աշնան անկէ վայրի խնձոր մը վար ինկաւ։ Թռչուննները թէ՛ խնձորը կըտոցահարեցին և թէ՛ անոր սերմերը։ Միայն սերմ մը ապատեցաւ անոնց կտուցէն և հողին տակ պահուըտեցաւ։



Ամբողջ ձմեռը սերմը ձիւնին տակ մնաց, իսկ գարնան երբ արեգակը խոնաւ երկիրը տաքցուց, սերմը սկսաւ աճիլ, ծիլերը արձակեց դէպի խոր, իսկ դէպի վեր ընձիւղեց առաջին եր-

կու թերթիկները։ Անոնց մէջէն դուրս ելաւ ցողունը և անոր վրայ երեւցաւ առաջին տերեւներուն փոքրիկ կոկոնը, որուն մէջէն վեր բարձրացան կանաչ տերեւներ։ Այնու-հետեւ նոր նոր կոկոններ, տերեւներ և ոստեր իրարու հետեւէ բուսան, և հինգ տարի վերջը այն տեղը ուր առաջին անգամ սերմը վար ինկած էր՝ գեղեցիկ խնձորենի մը տնկուեցաւ։

---

74. ԽՆՁՈՐԵՆԻ ՄԸ

Բ.

Այգեպանը ձեռքը բահ մը բռնած՝ եկաւ անտառը։ Խնձորենին տեսաւ ու ըսաւ. «Ինչ գեղեցիկ ծառ, ինծի պէտք է ասիկա։» Դողաց խեղճ խնձորենին, երբոր այգեպանը սկսաւ անոր տակը փորել, և կը մտածէր թէ ինք կորսուած է բոլորովին։ Բայց այգեպանը զգուշութեամբ փորեց, արմատներուն վնաս չտուաւ, հանեց զայն, իր այգին տարաւ և աղէկ մը տնկեց։

Խնձորենին հպարտացաւ և ինքնիրեն կ'ըսէր. «Կ'երեւի թէ հազուագիւտ ծառ մըն եմ ես որ զիս անտառէն այգի փոխադ-

բեցին։ Ան ըսելով՝ բարձրէն կը նայէր չորս կողմի տգեղ կոճղերուն վրայ որոնց գլուխները լաթով փաթթուած էին։ Կ'երեւի թէ խեղճը չէր գիտեր որ գինք կրթարան տարեր են։

Միւս տարին այգեպանը եկաւ կոր դանակը ձեռքը բռնած և սկսաւ խնձորենին կրթել։ Դողաց խեղճ խնձորենին ու կը մըտածէր. «Հիմա ա՛լ բոլորովին կորսուեցայ»։

---

75. ԽՆՁՈՐԵՆԻ ՄԸ

Գ.

Այգեպանը ծառին վերի կանաչ մասը կտրեց և միայն բունը թողուց. ասիկա բաւական չհամարելով՝ բունն ալ վրայէն ճեղքեց, այդ ճեղքին մէջ անցուց սիրուն շառաւիղ մը զոր ուրիշ խնձորենիներէ կտրած էր. բացուած վէրքը ձիւթով ծածկեց, լաթով փաթթեց, ճեղքերը մանր սեպերով լեցուց և թողուց գնաց։

Խնձորենին խոթացաւ, բայց անիկա հիմա աւելի ուժեղ էր. այդ պատճառաւ ալ շուտով առողջացաւ և միացաւ օտար ճիւղին հետ։ Օտար ճիւղը ուժեղ խնձորենւոյն

հիւթը ծծեց և կը մեծնար արագ ու գըռւարթ։ Բազմաթիւ նորանոր կոկոններ, տերեւներ, ոստեր ու ճիւղեր իրարու ետևէ կ'արձակուէին, այնպէս որ երեք տարի ետքը ծառը կարմրախառն և անուշահոտ ծաղիկներով զարդարուեցաւ։ Ծաղիկներուն կարմրագոյն թերթիկները թափեցան և անոնց տեղ երեւցան փոքրիկ կանաչ մասուրներ որոնք քիչ քիչ մեծնալով՝ աշնան խնձոր դարձան, բայց ոչ վայրենի թթու խնձոր, այլ մեծ մեծ կարմրագոյն, անոյշ ու կաղկուղ։ Եւ խնձորենին այնպիսի՛ պատուական ծառ մըն էր դարձեր որ ուրիշ այգիներէն կուզային անոր շառաւիղները տանիլ պատուաստի համար։

ՀԱՆԵԼՈՒԿ

Տախտակ մը ունիմ,
Տարին տասներկու ամիս
Մէկը ջուր է.
Թէ՛ կը թրջի
Եւ թէ չի թրջիր։

(Վեզու)



76. ՈՐԲԸ

Ձեր մօր քնքուշ գրկին մէջ տաք
Երբոր հանգիստ կը քընանաք,
Կը պաուկի որբն հողին վըրայ.
Մտածեցէ՛ք, փոքրիկ տըղա՛ք։

Դուք ամէն բան ունիք առատ,
Համբոյր, շաքար խաղալիք շատ.
Որբն հոգեր ունի միայն.
Մտածեցէ՛ք, փոքրիկ տըղա՛ք։

Ձիւնն երբ ծածկէ բոլոր աշխարհք,
Բոցին առջեւ դուք կը խայտաք.
Կը դողդըղայ որբը սակայն.
Մտածեցէ՛ք, փոքրիկ տըղա՛ք։

ԱՌԱԾ

Երնէ՛կ անոր որ խելօքին
Յարգ ճանչնալու խելք ունի։
Երնէ՛կ անոր որ անմիտին
Համբերելու սիրտ ունի։

ՀԱՆԵԼՈՒԿ

Հարս մը ունիմ որ եկող գացողին ձեռ-
քը կը պագնէ։ (Դրան զանգակ)

78. ԴԺԳՈՀ ՓԻԼԻԿԸ

Ա.

Սրմանք ու զարմանք տիրեց Փիլիկին
Տրտունջ ու բողոք հանեց դէպ Երկին
Թէ կարգ ու կանոն արարածին մէջ
Շատ ծուռ ու մուռ են, խառնակ ու շփոթ։
—«Վեր նայեցէք ծառին խոշոր
Ուր կան փոքրիկ ընկոյզներ կլոր,
Իսկ բարակուկ ցածուկ ոստին՝
Ձմերուկներ մեծ, ահագին։
Ես Աստուծոյ տեղն ըլլայի,
Հակառակը կը գործէի։
Ինչ և իցէ, եղածն այս է։
Քէյֆիս նայիմ, քունս եկած է,
Հանգչիմ քիչ մը, առնեմ ես զով,
Խաղաղ քաշեմ քուն անվրդով»։
Փիլիկ աղբօր քէյֆիկ տեղն էր,
Ի՞նչ էր պակաս, փորն իակ կուշտ էր։

Բ.

Սակայն այս իր քէյֆիկ լաւ
Քիթէն բերնէն շուտ եկաւ։
Յանկարծ մէկ ընկոյզ թա վերէն փրթաւ
Փիլիկի ճակտին շրախ մը զարկաւ։
Յառկեց իր տեղէն, ահա՛ իր ճակատ
Գտաւ կոտրտուած ու կարմիր ներկած։

Հեկեկաց իսկոյն ու բազկատարած՝
—«Ողիդ են, գոչեց, գործք քո, Տէր Աստուած,
Զի ձմերուկներն եթէ ըլլային
Իմ ուզածիս պէս՝ հոս վերեւ ծառին,
Գլուխս և ուղեղս չախչախուած էին։
Աստուած իմ քեզի փա՜ռք ու պատիւ միշտ։»

---

79. ԽԵԼԱՑԻ ՇՈՒՆ ՄԸ

Մեծ քաղաքի մը մէջ քանի մը բարեպորձ տիկիններ մէջերնին դրամ ժողվեր էին, և ամէն օր խեղճ թաղի մը աղքատ ծերուհիներուն կերակուր կուտային։



Կէս օրին, աղքատները կուգային ցած տնակի մը առջին, պանգակի մը չուանը կը քաշէին. պզտիկ պատուհան մը կը բացուէր գրեթէ գետնին հաւասար, և պնակ մը կերակուր կը դրուէր պատուհանին առջեւ։ Ծերուհին իր հետը բերած ամանին

մէջ կը լեցնէր կերակուրը և կ'առնէր կը տանէր։

Յետոյ, ուրիշ մը կուգար, և ամէնքն ալ իրարուետեւէ իրենց կերակուրը առնելով կը մեկնէին։

Շուն մը, որ միշտ այն տեղուանքը կը պտըտէր, անոնց ըրածը ուշադրութեամբ դիտեց, ծերունիներուն շուրջը սկսաւ որ իրեն ալ բաժին մը հանեն, բայց տեսնելով որ գինքը մտածող չկար, որոշեց ինք իր գլխուն ճարը տեսնել։

Օր մը, աղքատներուն մեկնելէն ետքը, գնաց ինք ալ զանգակին չուանը քաշեց։ պատուհանը բացուեցաւ, և պնակ մը կերակուր երեւան ելաւ։ Շունը անմիջապէս լափեց զայն ու հեռացաւ։

Ան յաջողութենէն քաջալերուած, խելացի կենդանին սկսաւ ա՛լ ամէն օր պատուհանին առջին ներկայանալ։

Ծառաները հասկցան շանը վարպետութիւնը, բայց ձայն չհանեցին, ուզելով կերակրել այդ շունը որ այդքան խելք ցոյց կուտար փորը կշտացնելու համար։

80. ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ

Օն, եկէք, տղաք, օն, եկէք խմբովին,
Եկէ՛ք հոս, Բեթղեհէմի մսուրին մէջ,
Եւ տեսէք այսպիսի գիշերուան մէջ
Աստուած որչա՛փ կ՚ուրախանայ երկնի մէջ։
Ա՛հ, տեսէք սա աղքատիկ մսուրին մէջ
Որդին Աստուծոյ լոյսերուն մէջ կը փայլէ,
Փաթթուած սպիտակ, մաքուր խանձարուրով,
Եւ հրեշտակներն իրեն շուրջ կը թռչտին։
Ա՛խ, Ան չոր խոտի վրայ պառկած է,
Մարիամ, Յովսէփ զմայլմամբ կը դիտեն.
Դաշտի հովիւներ ծնրադրեր՝ կ՚աղօթեն,
Երկինքի մէջ խմբովին հրեշտակներ կ՚երգեն։
Մենք ալ, ընկերնե՛ր, հովիւներուն հետ
Ծնրադրենք ու ձեռք բարձրացնենք,
Եւ սկսինք մենք հրեշտակներու հետ
Բարձրաձայն երգելով՝ գինք փառաբանել։

ԱՌԱԾ


Դուն թէ գիտես հազար բան՝
Մէկ գիտցողին բան հարցուր։
Գուցէ առնես պատասխան
Քու հազարէդ նոր ու սուր։

---

81. ԱՌԻԾԸ

Առիւծը կարելի է կոչել կատուին մեծ եղբայրը, ինչու որ երկուքն ալ կենդանիներու միևնոյն ընտանիքին կը վերաբերին։

Խոշոր առիւծի մը երկայնութիւնն է ութը ոտնաչափ, քիթէն մինչև պոչը։ Անիկա



այնքան զօրաւոր է որ կրնայ մեծ հորթ մը տանիլ այնքան դիւրաւ, որչափ կատուն մուկ մը։

Առիւծը ունի մեծ գլուխ մը, փայլուն աչքեր և ծածանող բաշ։ Անոր տեսքը ազնիւ է, և իրաւամբ կը կոչուի կենդանիներուն թագաւոր։

Առիւծին գլխաւոր բնակավայրն է Ափրիկէ։ Անիկա կը սիրէ որսալ գիշեր ատեն։ Երբ առնոր մռնչուքը լսուի՝ անտառին միւս կենդանիները սարսափահար՝ ծակէ ծակ կը մտնեն։

Երբ անիկա ամպի նման կ՚որոտայ՝ պէտք եղած ուժն ալ ունի թշնամիին դիմադրելու։ Բայց նկատուած է որ անիկա մարդոց հետ պատերազմելէ չախորժիր. կարծես հասկցած է որ մարդուն խելքը իր ճիրաններէն ու ակռաներէն աւելի զօրաւոր է։

Եւ արդարև շատ դիւրին բան է առիւծ մը վախցնելը։— Վերջերս մարդ մը որսորդութեան ելած էր հարաւային Ափրիկէի մէջ։ Ան չէր գիտեր իր մօտերը առիւծներ կային։ Եւ ահա յանկարծ օր մը անոր վրայ ցատկելով՝ զայն անմիջապէս գետին տապալեց։

Որսորդը ա՛լ ժամանակ չունէր իր հրացանը պարպելու, ու այսպէս անօգնական մնացած էր վայրենի գազանին ճիրաններուն տակ։ Բայց ան իր տագնապին մէջ յանկարծ յիշեց որ կենդանին վախցնելով՝ կրնար թերեւս իր կեանքն ազատել։ Ուստի պահիկ մը բոլորովին անշարժ կենալէն յետոյ՝ սկսաւ բոլոր ուժով հաչել շան մը պէս։

Առիւծը՝ այս յանկարծական հաչոցէն լեղապատառ՝ իր որսը թողուց ու արագ քայլերով փախաւ։

---

82. ԾԻՐ ԿԱԹԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

—Մայրի՛կ, ի՞նչ է երկինքի լոյսերուաս շարոցը։

—Ծիր կաթին է, տղե՛կս։

—Մայրի՛կս, ի՞նչ է Ծիր կաթինը։

—Աստուածածնի ծիծին կաթկրթիկներն են, տղե՛կս։

—Ինչո՞ւ լոյսեր եղած են, մայրի՛կս։

—Ահ, տեղե՛կս, օր մը Բեթլեհէմի ծըծմայրերուս կաթը փախաւ, Աստուածածին անոնց մանկիկներուն մեղքընալով՝ կաթիկ տուաւ որ անօթի չմեռնին։

—Ինչո՞ւ փախան ծծմարերուս կաթը, մայրի՛կս։

—Ա՛հ, տղե՛կս, մեր Ջար կաղը ծծմարերուս խմած ջուրը հմայեց, որպէսզի Աստուածածնի կաթն ալ փախի և Յիսուս մանուկը կաթով չապրի—մեռնի։

—Յետոյ ի՞նչ եղան մանկիկները։

—Երբ նահատակուեցան, անոնց արիւնները կաթ եղած էին, և արիւնէ կաթ եղած կաթի կաթիլները լոյսի փոխուելով՝ երկինք թռան, հոն խումբ խումբ եղան ու ըսուեցան «Ծիր կաթին»։

—Հոն ի՞նչ կ'ընեն հիմա անոնք, մայրի՛կս։

—Երկինքէն քեզի պէս խելօքիկ տղեկներուն կը նային որ անոնց աչքերուն լոյս տան, լո՛յս։

—Մայրի՛կ, ամէն առեն հո՞ն են։

—Չէ՛, տղե՛կս. հիմա երկինքէն վար կ'իջնեն ու ժամ կուգան, տղե՛կս, «Փա՛ռք ի բարձունս» կ'ըսեն և իրենց նայող մանկիկներուն մանրիկ աչուկներուն լուսիկ կուտան, տղե՛կս, լուսի՛կ։

—Ինծի ալ լուսիկ կուտա՞ն, մայրի՛կս։

—Այո՛, տղե՛կս, այո՛, թէ որ դուն ալ ժամ երթաս և այդ լոյսերուն նայիս։

—Երթան, ժամ երթանք, մայրի՛կս, որ ես ալ լոյս առնեմ, լո՛յս։

—Երթանք, տղեկս, ժամ երթանք. հոն այդ լոյսերուն մէջ է քու մեծ-մամիկդ, լոյս-մամիկդ, հաճի խաթուն մամիկդ, ԱԱՏՈՒԱԾԱԾԻՆԸ։

Եւ հրեշտակային ձայներ կը լսուէին ժամուն մէջ, երբ մայր և որդի հոն կը մտնէին.

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն, և օրհնութիւն։»



83. ՄԵՂՐԻ ԳՈՂԸ

Ո՜հ, այս որքա՜ն լաւ կը բուրէ.
Մեղր է անշուշտ. տեսանենք ո՛ւր է.
Մեղուանոցը ահա հոն է,
Պատառ մը ինձ չե՞ն տար գոնէ.
Բայց կը վախնամ մեղուներէն,
Պիտի արդեօք ինծի ներե՞ն։»

Արջը դարձուց մեծ մէկ փեթակ,
Մեղրը ինկաւ թաթերուն տակ.
Ո՜հ, ի՜նչ անուշ էր և ընտիր,—
Բայց շուտ հասան վրէժխնդիր
Մեղուները ամէն կողմէն,
Ու խայթեցին զայն դառնօրէն։

84. ԳԻՏՆԱԿԱՆ ՏՂԱՆ

Սիսակ իր կարգին ամենայառաջադէմ աշակերտն էր։ Թուաբանութեան դասին մէջ մանաւանդ իր ձեռք բերած յայտողութիւնը պարզապէս հիանալի էր։


Երբ քննութիւնները յայտող կերպով աւարտեցան, մայրը տղուն ուրախութիւն մը պատճառելու նպատակով՝ երկու վառեակ խորոված եղ նոյն օրուան ճաշին համար։

Սիսակ սեղանին վրայ իր հաշուեգիտական հանճարն անգամ մըն ալ փայլեցնել ուզելով՝ ըսաւ. «Հիմա դուք կը կարծէք թէ այս սեղանին վրայ երկու խորոված վառեակ կայ. բայց ես պիտի ապացուցանեմ որ երեք հատ կայ։»

Իր հօրը ու մօրը դէմքերուն վրայ հիացումէ աւելի թերահաւատութիւն տեսնելով՝ Սիսակ սկսաւ գործողութեան. — «Սա առաջին վառեակն է, ուստի՝ մէկ. միւսը երկրորդ վառեակն է, ուստի՝ երկու. և ո՞վ չի գիտեր որ մէկ, երկուք ալ երեք կ'ընէ։»

«Լաւ, ըսաւ հայրը լրջօրէն. եթէ հաշիւդ ճիշդ է՝ առաջին խորովածը կուտամ մօրդ. երկրորդը կ'առնեմ ես. իսկ երրորդն ալ կրնաս դուն առնել։»

Կրնաք երեւակայել գիտնական տղուն ապշութեան աստիճանը։ Իր թուաբանական նոր գիւտին վրայ մազ մնաց որ խորոված վառեակներն անգամ խնդային.



85· ՍՆԱՓԱՌԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Առեւտուն տակ մի աքաղաղ
Այսպէս ճառեց հաւի խումբին,
«Ինձ նայեցէք, ո՞ր մարդ անվախ
Կրնայ չափուիլ հետս լիովին։
Տեսէք աչքերս խոշոր, հըզօր,
Ճոխ փետուրներս, ոսկի, շըքեղ,
Կատարիս տեսքն ալ փառաւոր

Ու իմ պըսակս բոսորագեղ։
Նաև կեցուածքս ազուռը, հըպարտ,
Կոչիս բարբառն փոդի նըման,
Եւ քալուածքըս վեհ ու հանդարտ,
Ու ոտքերուս չուխտակ խըթան.—
Այս բոլորն է նըշան մարդուն
Որ արդարեւ ըսել կրնայ
Թէ ինք ծընած է դիւցազուն։»
Այսպէս գոռոզ ճառելով նա
Խօսեցաւ հոն խիստ բարձրաձայն.
Յանկարծ եկաւ պզտիկ մէկ շուն,
Հաչեց, ցատքեց քիչ մը միայն՝
Վախցընելու մեր դիւցազուն.
Եւ ո՜հ, տեսէք, հերոսը քաջ
Կրցածին չափ փախաւ արագ,
Ծակ մը փնտռեց մէկ ձախ, մէկ աջ,
Ու լաւ մ'եղաւ հոն խայտառակ։

---

86. ԱՌՏՈՒԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Կարմիր արեւը բարձրացաւ երկնքին վրայ և սկսաւ ամէն կողմ տարածել իր ոսկեփայլ ճառագայթներուն որ երկիրս արթնցնէ։

Առաջին ճառագայթը թռաւ, ինկաւ արտոյտին վրայ։

Արտոյտը թրթռաց, թեւերը շարժեց,


դուրս թռաւ բոյնէն, արագ արագ բարձրացաւ և երգեց իր դեղեցիկ երգը։—„Ահ, ինչ քաղցր է առտուան պարզ ու զով օդին մէջ թռչիլ, ինչպէս լաւ է, ինչ ուրախութիւն։»

Երկրորդ ճառագայթը ինկաւ նապաստակին վրայ։ Նապաստակը ականջները շարժեց և ուրախ դէմքով սկսաւ ցատկռտել ցօղապատ մարգագետիններուն վրայ։ Ետքը վազեց գնաց հիւթալի նախաճաշ ընելէ։

Երրորդ ճառագայթը հաւնոցը մտաւ։ Աքաղաղը թափահարեց իր թեւերը և երգեց. «կու-կու-լիկ-կու։» Հաւերը թառեռրուն մէջ հաւաքուեցան, կլկռացին, սկսան աղբը յուզել և ճճի փնտռել։

Չորրորդ ճառագայթը ինկաւ փեթակին վրայ։ Մեղուն դուրս սողաց իր մոմեղէն խցիկէն, կեցաւ փեթակին դրան առջեւ, թեւերը բացաւ և բզզալով՝ թռաւ, գնաց մեղր հաւաքել հոտաւէտ ծաղիկներէն։

Հինգերորդ ճառագայթը ինկաւ մանկանոցը, փոքրիկ Ծոյլ մանուկին անկողնին վրայ և սկսաւ ուղղակի անոր աչքերը ծակել, բայց անիկա միւս կողմը դարձաւ և նորէն քնացաւ։



87. ՀԱՅՐԻԿԸ

Շատ կը սիրեմ իմ հայրիկ.
Ամէն առեն ինք ինծի
Կ'ընէ շա՛տ, շա՛տ, շա՛տ բարիք.
Ի՞նչպէս պատմեմ ես ձեզի։

Ամա՛ռ կ'ըլլայ թէ ձմեռ
Ան կ'աշխատի օրն ի բուն,
Հանգչելին ի՞նչ է, չի գիտեր,
Զուռնի նաև երկար քուն։

Դեռ արեւը չցաթած՝
Կ'ելլէ, կ'երթայ իր գործին,
Տուն կը դառնայ երբ արդէն
Մութը կոխեր է գետին։

88. ՔԱՋՈՒԹԻՒՆ

Անգամ մը լեռներու մէջէն ուղտերու մեծ կարաւան մը կ'անցնէր՝ ապրանք բեռցուած։ Հարուստ վաճառականներն իրենց ապրանքին հետ մէկտեղ կը ճամբորդէին։ Երբ մտան այնպիսի խորունկ ձորի մը մէջ ուր մինակ երկինքի կապոյտը կ'երեւէր, յանկարծ շատ մը ձիաւորներ խոտերու ետեւէ դուրս թափեցան և կարաւանին առջեւը բռնեցին։ Անոնք աւազակներ էին և կ'ուզէին կարաւանը կողոպտել։

Վաճառականներուն մէջ մէկը կարքաառասուն տարեկան միջահասակ քաջ մարդ մը—որ անմիջապէս բոլոր չորեքհաններուն ու վաճառականներուն գլուխը անցաւ և հրաման ըրաւ որ կարաւանը կեցնեն։ Յետոյ հաւաքեց իր բոլոր մարդիկը, ձիերուն ետեւ մոցուց զանոնք և հրացանները ուղղեց աւազակներուն, գոռալով. «Կա՛մ հեռացէք, կա՛մ կը զարնենք։» Աւազակները տեսան որ իրենց գործը գէշ է, քաշուեցան և միտքերնին դրին երթալ ձորին միւս բերանը սպասել։ Քաջասիրտ վաճառականը որ շատ ճամբորդութիւններ ըրած էր և ա-

ազգականներու հնարքները գիտէր, անմիջապէս կարաւանին գլուխը դարձուց և ճամբայ փոխեց։ Կը տեսնէք հիմա։ Այս քալմարդը նախ չվախցաւ և քաջութեամբ ազգականները հեռացուց։ Բայց յետոյ խոհեմութիւն ըրաւ և ճամբան փոխեց։

---

89. ԳԻՂԱՑԻՆ ԵՒ ԿԱՊԻԿԸ

Հարուստ և տգեղ կոմսուհի մը կապիկ մը ունէր, որ թաւշէ ոսկեճամուկ զգեստներով հագուած՝ տան մէջ կը պտտէր։ Օր մը ագարակի մը ծառան իր տիրոջը կողմէն կողով մը լեցուն պտուղ բերաւ կոմսուհիին։ Երբ սանդուխէն վեր կ'ելլէր, կապիկին հանդիպեցաւ ու մարդ կարծելով՝ բարեւեց զայն։ Կապիկը գուշակելով որ ուտելիք մը կար, տղան կեցուց և կողովին տերեւները բանալով՝ մէջը գտնուած թուզերը մէկիկ մէկիկ կերաւ։ Նոյն միջոցին տան տիրուհին վրայ հասաւ։ Այն ատեն ծառան ըսաւ. «Տիկին, տեսա՞ք ձեզի կը ղրկէ այս կողովը որուն մէջ սերկեւիլներ կան. թուզեր ալ կային, բայց ձեր որդին կերաւ զանոնք։»



90. ԳՈՒԹ

Ոտքը բոբիկ, գլուխը բաց,
Փորն անօթի, դէմքը դեղնած,
Ջունէը հայր, մայր և ոչ ալ տէր,
Դռնէ ի դուռ կը պտըտէր.
Աչքերը միշտ լալէն ուռած՝
Ան կը խնդրէ հագուստ ու հաց։

Իր վիշտերն ամէն մէկուն
Ան կը պատմէր առտու, իրիկուն.
Փուշ փուշ եղաւ մարդոց մարմին՝
Ականջ դնելով անոր ձայնին,
Եւ բարեսիրտ տղայք անոր
Տըւին բաներ հինցած կամ նոր։

Ան որ տեսաւ բարի Զաքէն,
Յօղն արցունքի սրբեց աչքէն,
Վազեց գնաց և իր մօրկան
Ըսաւ. «Մայրի՛կ, ա՛խ, այս ո՛րքան
Որբ տղայք կան, կը տառապին...
Ունեցածներս տո՛ւր սա որբին»։

«Ապրի՛ս, որդեա՛կ», ըսաւ հայրը,
Եւ համբուրեց զայն իր մայրը։
Քիչ վերջ Զաքէն մէկ մեծ ծրար
Յանձնեց որբին որ կը դողար։
Ուրախ եղաւ որբը յուզուած,
«Ապրի՛ս» ըսաւ վերէն Աստուած։

---

91. ԶԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԷՆ ԲԱՐԻՔ


Գեղեցիկ շաբաթ օր մը հինգ տղաք անտառը կերթային կաղին ժողվելու։ Անոնք քաղաքին դուրսը տեսան տղայ մը, որ ձեռքի սայլակ մը կը քշէր բլուրն ի վեր։

«Կրպօն է իր սայլակովը,» ըսաւ Մանուկ։

«Մէկը արդեօք ի՞նչ ունի,» հարցուց Գրիգոր։

«Եկէք, գլխուն խաղ մը խաղանք,» ըսաւ Արամ. «Ետեւէն վազենք ու սայլակը դարձնենք։»

Աղքատ այրիի մը որդին էր Կրպօ, որուն մկրտութեան անունն էր Կարապետ։ Ան ամէն օր կանոնաւոր կերպով կ'երթեւեկէր իր սայլակովը, ջանալով միշտ օգնել իր մօրը։



Եւ հինգ տղաքը վազեցին Կրպօի ետեւէն. բայց ան կռահելով անոնց չար դիտաւորութիւնը՝ պինդ կը բռնէր սայլակը։ Անոնք տեսան որ սայլակը խնձորներով լեցուն էր, ու խորհեցան որ ի՛նչ զարմանալի խաղ մը պիտի ըլլար՝ եթէ սայլակը դարձընէին ու խնձորները բլուրն ի վար գլորուէին։ «Հանգիստ թողուցէք զիս» ըսաւ Կրպօն. «խորհեցէք որ մէկի դէմ հինգ էք։ Ամօթ է։»

Անոնք մտիկ չըրին։ Եւ մինչ Մանուկ և Աբրամ կրպօյի թեւերը բռնած էին, Գրիգոր և միւսներ դարձուցին սայլակը։

Ինձորներ բլուրն ի վար կ'ոստոստէին, ամէն մէկը տարբեր ուղղութեամբ։ Բայց Գրիգորն ալ ճիշդ նոյն ատեն գետին ինկաւ բարձր ճիչով մը։ Իր ոտքն անիւին մէջ բռնուած ու գէշ կերպով վիրաւորուած էր։ Ընկերները ճամբուն եզերքը տարին զայն։

«Հիմա ի՞նչ ընենք,» ըսաւ Մանուկ։

«Թերեւս քիչ ետքը հանգստանամ ու կամաց կամաց ձեր ետեւէն գամ,» ըսաւ։

«Շատ կը ցաւիմ քեզ այսպէս մինակ թողելուս համար, ըսաւ Աբրամ. բայց խորհէ որ շաբթուան մէջ այս օրը միայն ունինք ազատ։ Մնաս բարով. չանա շուտ հասնիլ մեր ետեւէն։»

Անոնք գացին, խորհելով թէ Գրիգորին վէրքը մեծ բան մը չէր։ Բայց ցաւը երթալով սաստկացաւ ու տղուն աչքերը սկսան արցունքոտիլ, երբ ինքզինք բոլորովին մինակ զգաց։

Այս վիճակին կրպօն ցնորուցան եղած խնձորները կրկին ժողված էր սայլակին մէջ, ու երբ երթալու կը պատրաստուէր՝ տեսաւ Գրիգորը խոճակի վիճակի մէջ. մօտը գնաց

ու կարեկցութեամբ հարցուց «Մթթէ շատ ցնաւուա՞ծ եա ։»

«Վախնամ այո՛,» ըսաւ Գրիգոր ։

Առանց ուրիշ բառ մը խօսելու՝ կրպօ գնաց, սայլակին խնձորները պարպեց, ցանկապատին եռեւ պահեց ու դառնալով՝ Գրիգորը գրկել ու սայլակին մէջ նստեցնելը մէկ եղաւ ։

«Տեղդ շատ ալ հանգստաւէտ ըլլալու չէ հարկաւ, ըսաւ ան. բայց ինչ ալ ըլլայ՝ նորէն ոչինչէն աւելի աղէկ է ։» Ու այսպէս մինչև Գրիգորենց տունը տարաւ սայլակը, ու ետքը վերադարձաւ իր խնձորներուն ։

Գրիգոր պատահածը մօրը պատմելով՝ աւելցուց. «Մայրիկ, այսօր կրպօ ինծի անչքշաչարութեան ու վեհանձնութեան անանկ աղուոր դաս մը տուաւ, որ ամբողջ կեանքիս մէջ մոռնալիք չունիմ ։”

---

92. ԳԱՐՈՒՆ


Գարունն եկաւ զուարթ դէմքով,
Լեցուց դաշտերն հազար բերքով,
Գարի, վարսակ, ցորեն ունինք,
Ա՛լ ի՛նչ կ՚ուզենք, պէտք և հրճուինք ։



Անձ ու ոչխար, հաւ, սագ ու բադ,
Գիրուկ կովեր որ տան մեզ կաթ,
Մեր տարեկան պարէնն ունինք,
Ա՛լ ի՛նչ կ՚ուզենք, պէտք է հրճուինք։

Ձմրան համար տաք հանդերձանք
Կ՚ըլլան մեզի բուրդն ու բամպակ.
Շերամ, մեւաքս, զարդեր ունինք,
Ա՛լ ի՛նչ կ՚ուզենք, պէտք է հրճուինք։

Ահա պատրաստ ճաշ գեղջկական,
Ուտենք համով մեր հացն ու թան,
Կարագ, մածուն, հաւկիթ ունինք,
Ա՛լ ի՛նչ կ՚ուզենք, պէտք է հրճուինք։



93. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Աղուէսը օր մը սեղան պատրաստեց մացառի մը շուքին տակ, և արագիլը ճաշի հրաւիրեց։ Ճաշը պարզ էր, մէկ տեսակ մը ապուր միայն զոր տափակ պնակի մը մէջ լեցուցած բերաւ։

Արագիլը, որուն կտուցը շատ երկայն ու բարակ է, չկրցաւ փշրանք մը բան ուտել այդ պնակին մէջէն, և բոլոր կերակուրը աղուէսը ինք լափեց։

Արագիլին սիրտը շատ վիրաւորուեցաւ այս անքաղաքավար հիւրընկալութենէն, և միտքը դրաւ որ ինք ալ խաղ մը ընէ անոր փոխարէն։

Ուստի քանի մը շաբաթ ետքը գնաց աղուէսին աղաչեց որ ճաշի գայ իրեն. «կը խօսինք կը խնդանք, կ'ուտենք կը խմենք, և աղուոր ժամանակ կ'անցընենք,» ըսաւ անոր։

Աղուէսը ուրախութեամբ ընդունեց այս հրաւէրը և որոշեալ ժամուն հոլաւ գնաց։

Հասեղ կերակուրին հոտը աշխարհք բռներ էր, և աղուէսին ախորժակը հետզհետէ աւելի կը բացուէր։

«Այս ինչ աղուոր բաներ պատրաստեր ես, կ'ըսէր արագիլին. շատ ծախքէ ելեր ես, սիրելի բարեկա՛մս,» ու անհամբեր կ'սպասէր համտեսամ ճաշարներուն որոնք շամփուրին վրայ շարունակ կը դառնային։


Մէյ մըն ալ նայիս, աղուոր ամանի մը մէջ սեղան բերուեցաւ ճաշարին միսը սքանչելի խորոված. դժբախտաբար ամանին բերանը նեղ ու վիզը շատ երկայն էր։

Արագիլը անմիջապէս կտուցը խոթեց ու սկսաւ ախորժակով ուտել։

Բայց աղուէսին ցուցակը լայն էր ու անոր մէջ չէր մտներ։

Ուստի անօթի ծարաւ իր տունը դարձաւ, սաստիկ նեղացած, ականջները կախ։ Մինչ արագիլը խնդալով կը պտռար ետևէն.

«Անուշնեը ըլլայ, աղուէ՛ս եղբայր. երբ որ կ'ուզես հրամմէ նորէն։»



94. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՄՈՒԿԸ

Ծակին մէջէն օր մը մուկը տեսաւ կատուն։
«Ինչո՞ւ համար, ըսաւ չարիք կ'ընես մեզ դուն։
Խեղճ մուկերը հասցուցած չեն քեզի վընաս.
Եթէ ճանչնաս պանոնք դուն գոհ պիտի մընաս։
Գիշեր ցորեկ ինչո՞ւ ըզմեզ կը հալածես.
Կ'ուզե՞ս, քեզի բաժին հանեմ կերած հացէս։
Եւ հաշտուինք, մոերմանա՛նք իրարու հետ,
Վըրէժն ու քէն ալ մեր մէջէն ըլլան անհետ։
—Բարի մուկ մը կ'երևաս դուն և խելացի,
Այդ խօսքերըդ բարձր ու վըսեմ շատ սիրեցի.
Կ'ուզեմ զքեզ մօտէն տեսնել. ելի՛ր ծակէդ,
Ցուցո՛ւր ինծի սա անուշիկ հասակըդ գէթ։
Առաջ եկո՛ւր, ի՞նչ կը վախնաս, անոր կ'ըսէր.
Ես ոչ քեզի, ոչ քու ցեղիդ չեմ վընասեր։»
Մուկն անխոհեմ ելաւ ծակէն տոտիկ տոտիկ.
Կատուն ցատքեց ու պայն ըրաւ բզգիկ բզգիկ։



95. ԿԱՂԱՄԱԽԻՆ

Ատենօք բարի և արդար դատաւոր մը կար։

Օր մը, անոր ներկայացան երկու երիտասարդները՝ Մանուկ և Աբէլ։

Աբէլ ըսաւ դատաւորին.

— Տէ՛ր, առջի տարի ճամբորդութեան պիտի երթէի, չուզեցի հետս տանիլ թանկագին քարերով պճնուած մատանի մը որ մօրս յիշատակն էր. և որովհետեւ Մանուկ

իմ բարեկամս էր, մատանին անոր տուի որ պահէ. հիմա ճամբորդութենէ դարձած եմ, մատանիս կը պահանջեմ, բայց Մանուկ կ'ուրանայ առած ըլլալը։

Մանուկ ալ երդում ըրաւ և ըսաւ.

—Տէ՛ր դատաւոր, Աբէլ սուտ կը խօսի. ինծի մատանի չտուաւ բնաւ։

Այն ատեն՝ դատաւորը Աբէլի դարձաւ և ըսաւ.

— Աբէլ, վկայ մը, ապացոյց մը ունի՞ս։

— Աւա՛ղ, ո՛չ պատասխանեց Աբէլ. միայն կապամախի մը կար այնտեղ՝ ուր մատանին Մանուկի յանձնեցի։

—Ճի՞շդ է, հարցուց դատաւորը Մանուկին։

Մանուկ նորէն երդում ըրաւ և ըսաւ.

—Տէ՛ր դատաւոր, մատանին պէս՝ կապամախին ալ չեմ տեսած։

Դատաւորը, պահ մը մտածելէ վերջ, ըսաւ.

—Աբէ՛լ, գնա՛ այդ ծառէն ճիւղ մը բեր. իսկ դուն՝ Մանո՛ւկ՝ սպասէ՛ այստեղ մինչև որ Աբէլ վերադառնայ։

Ժամ մը վերջը երբ դեռ Աբէլ չէր վերադարձած, դատաւորը, անհամբերութեան շարժում մը ընելով, ըսաւ.

—Մանո՛ւկ, ինչո՞ւ Աբէլ այսքան ուշացաւ. սա պատուհանը բաց ու նայէ թէ կուգա՞յ։

—Տէ՛ր պատաւուր, ըսաւ Մանուկ, անկարելի է որ այսքան շուտ վերադառնայ, որովհետեւ կաղամախիին տեղը շատ հեռու է։

—Ա՜հ, ատախօ՛ս, գոչեց պատաւորը, հապա կ՛ուրանայիր թէ ծառը չես տեսած ընաւ... հիմայ որ սուտդ բռնուեցաւ, ա՛լ տարակոյս չկայ թէ մատանին իրա՛ւ առած ես... շո՛ւտ տիրոջը վերադարձուր զայն... իսկ քու ստախօսութեանդ համար քեզ բանտ նետել պիտի տամ։

96· ԱՂՈՒԷՍ ԵՒ ՕՁ

Ա.

Աղուէս և Օձ իրար գտան,
Մտերմաբար դաշնակցեցան
Որ իրարմէ ամենեւին,
Ինչ որ ըլլայ, չբաժնուին։
Բայց ո՞վ չգիտէ,
Խիկար կը պնդէ
Թէ չարերուն ընկերութիւն
Կարելի չէ ըլլալ տեւուն։

Այս առած֊ին՝ բախտն ալ կարծես
ՃշդուԹիւնը շուտ հաստատեց։



Օր մը ասոնք ձորի մը քով
Վազուն ջուրին շեշտ նայելով՝
Ինչ սիրալիր խօսք իրարու
Տուին առին, ո՛վ պատմելու
Ունի լեզու։
Խորհուրդն անլսատ, ինչ էր արդեօք,
Որուն համար էին մտահոգ։
Ջուր կար շատկեկ. մէկը լուղ գիտէր,
Իսկ միւսը՝ կեղծէր թէ չէր գիտեր։
Բայց վերջապէս գտան ճար,
Եւ արդարեւ գիւտ ճարտար։
Թողուց Աղուէս, վա՛յ մեղքիս,
Որ օձ ուրէ իրեն վիզ.
Սակայն յետո՛յ, վա՛յ իմ մեղքիս,
Օձ կը խորհէր Աղուէսին վիզ
Պինդ սեղմել
Սատակել։

---

97. ԱՂՈՒԷՍ ԵՒ ՕՁ

Բ.

Մազ մնաց որ ազուէս խղդուէր,
Եթէ ճարպիկ չգտնուէր
Ու չազերսեր.

«Օձուկ եղբա՛յր, ինա՛ս բարեաւ,
Մահու, այժմ, կ՚զգամ մէկ ցաւ,
Մխակ հայցուածծ քեզ ունիմ, կը պաղատիմ
Որ կատարելով սիրով հաճիս, սիրա-
կանդ իմ։»

— Ըսէ՛։

—Ա՛խ, մէկ անգամ քու գլխիկդ երկարէիր,
Վերջին անգամ ինծի պաչիկ ճակտէդ
տայիր,
Գէթ աչքս բաց ես չմեռնէի։»

Խորամանկին այս խօսքերէն
Համոզուեցաւ Օձն անօրէն,
Եւ գլխիկը երբ երկարեց,
Բոլոր ուժովն իսկոյն աղուէս
Ցնցեցաւ։
Յաղողեցաւ
Օձին գլուխը խածնել ճզմել,
Եւ Օձ վրայէն մէկդի նետել։
Յայտնի է երբ Օձ հոգեւարի,
Շիփ շիտակուկ երկար փուռի։
Սոյն օրինակ հոգեվարին ականջն ի վար
Մեր Աղուեսուկ ծիծաղելով՝ կը մրմռար։
«Այս աշխարհի մէջ ընկերաբար
Անկեղծ սիրով ապրելու համար,
Սրտով ալ ըլլալու է շիփ շիտակ,
Ոչ թէ ծուռ մուռ, կ՚իմանա՞ս դու, ո՛վ
Օձուկ։»

98. ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ

Ուէթ տարեկան աղջիկ մը Մաքրինէ անունով ոտքերը քաշուած՝ անդամալոյծ, միշտ պատուհանին առջև կը նստէր ու քան մը չէր կրնար ընել։ Եղաւ որ իր մայրը մեռաւ, հայրն ալ կուրացաւ։ Ի՞նչ ընելու էր խեղճ աղջիկը։ Մտածեց որ հիմա ի՛նքը պէտք է օգնէ իր հօրը։ Անմիջապէս կօշիկի մեծ գործատուն մը կ'երթայ ու կը խնդրէ որ իրեն գործ տան։ Ամբողջ ցորեկն ու գիշերուան մէկ մասը կ'աշխատի, մուճակ կը կարէ, և օրականը մը ձեռք բերելով՝ իր կոյր հայրը կ'ապրեցնէ։

Ուրիշ ժիր տղայ մը, Արէտ անունով, դեռ տասնըվեց տարեկան, կը կորսնցնէ իր սիրելի հայրն ու գորովագութ մայրը։ Տանը մէջ կը մնան իր երեք պզտիկ քոյրերն և մեծ հայրն որ հիւանդ էր, և տեղէն չէր կրնար շարժիլ։ Ի՞նչ ընէր հիմա Արէտ։ Անիկա խելացի ու քաջասիրտ տղայ էր, կ'երթայ գործարանատէրի մը քով ու կ'աղաչէ որ իրեն գործ տայ։ Արէտ դպրոցէն ելած էր ու աղէկ բաներ սորված գիտութեան վրայ։ Գործարանատէրը կը հաւնի անոր ու քովը կ'առնէ։ Արէտ ցորեկը քանի

101. ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ

Դեկտեմբեր ամիսն էր, շատ ցուրտ կ'ընէր. տուներն ու ճամբաները ձիւնով ծածկուած էին։

Աղաւնի՝ իր սենեակին պատուհանին առջեւ կեցած, փողոցը կը դիտէր, երբ մայրը ներս մտաւ և նստաւ տաքուկ վառարանին առջեւ։



Աղաւնի անմիջապէս մօրը քով գնաց։

—Մայր, ըսաւ, շատ ցուրտ կ'ընէ այսօր. խեղճ թռչունները արդեօք որչա՞փ կը մսին. այսօր քիչ մը աւելի հացի փշրանք պիտի նետեմ անոնց։

—Շատ աղէկ մտածեր ես, աղջիկս, ըսաւ մայրը, բայց թռչուններէն աւելի գըթութեան կարօտ արարածներ կան, անոնց վրայ ալ մտածելու ես։

—Որո՞նք են հարցուց Աղաւնի։

Աղքատ տղաքը. անոնք ո՛չ քեզի պէս աղուոր կերակուրներ ունին, ոչ հագուստ,

ոչ ալ խաղալիք. կ'ուզե՞ս որ այսօր քեզի հետ անոնցմէ մէկ քանիին այցելենք:

—Օ՜հ, այո՛, մա՛յր, գոչեց Աղաւնի:

Երկու ժամ վերջ՝ Աղաւնի և իր մայրը դուրս ելան ու շատ մը կարօտ ընտանիքներու այցելեցին:

Աղաւնի շատ յուզուեցաւ այդ ընտանիքներու թշուառութիւնը տեսնելով, և իր քսակին մէջ գտնուած դրամը անոնց բաժնեց:

Բարի աղջիկը դրամը չէր սիրեր. աւորը համար՝ շատ դիւրաւ գտաւ ողորմութեան այդ եղանակը:

Դիտած էր մանաւանդ որ իր այցելած տղաքը բնաւ խաղալիք չունէին:

Երբոր տուն վերադարձան, Աղաւնի ծրարեց իր ամէնէն սիրուն խաղալիքները և մօրմէն արտօնութիւն ուզեց զանոնք աղքատ տղոց ղրկելու համար:

Մայրը զարմացաւ. հարցուց թէ ինչո՞ւ իր ամէնէն սիրուն խաղալիքները ղրկել կ'ուզէ:

—Մա՛յր, պատասխանեց Աղաւնի, այսօր հասկցայ որ ճշմարտապէս ողորմած ըլլալու համար պէտք է ինքզինքը զրկել:

Մայրը շատ ուրախացաւ այս պատասխանէն և կաթոգին համբուրեց Աղաւնին:



102. ԿԱՊԻԿ ՃԳՆԱՒՈՐ

Ա.

Աղուխաուկն ու խաժ կապիկ
Յորհուրդի նստան մենիկ
Թէ ի՛նչպէս ճարեն դիւրին
Գէրուկ որսեր իրենց փորին։
Պնդեց Աղուէս. «Մինակ ճար հնար,
Գիտես ի՞նչ է կապիկ աղբար.
Լաւծ եմ թէ կատուն երբեմն հագեր փիլոն
Եւ եղած է ճգնաւորիկ, ուշիմ, զգօն՝
Որսալու համար մուկեր դիւրաւ։
Ուստի հիմա շուտով կ՚երթաս,
Փիլոն, վեղար դու կը գողնաս
Սա մեր ծօտիկ վանքին
Ճգնաւորին,
Եւ կ՚ըլլաս ճգնաւոր
Փառաւոր։



Բ.

Եւ ահա յանկարծ լեռ, ձոր մեծ համբաւ
Ամէն տեղ օր մը տարածուիլ սկսաւ
Թէ հրաշագործ մի ճգնաւոր բժիշկ ցաւի է բիւրաւոր.
Վկա՛յ—Աղուխսուկն է որ կը պնդէր,
Ալն է գօրաւոր ու շնորհաբեր:
Անցան օրեր, այս մեծ համբաւ
Քաջ առիւծին ականջն հասաւ:
Կռահեց իսկոյն թէ հոն խարդախ
Կապիկ, Աղուէս կը խաղան խաղ:
Ուստի հիւանդ ան ձեւացաւ
Սուրբն ու վկայն տեսնել եկաւ:
Բայց երբ կապիկ դրաւ իր ալ,
Յատկեց իսկոյն Առիւծն քալ,
Կը պատռտէր, կը մռնչէր:
Իսկ Աղուէսը երբ այս տեսաւ,
Լեղապատառ ձգեց փախաւ.
—«Վա՛ւ որ եղեր եմ փոքրաւոր»:

103. ԲԱԻԱԿԱՆ ՉԷ ԱՐԴԱՐ ԸԼԼԱԼ

Ջընել ուրիշին ինչ որ չենք ուզեր որ չընեն մեզի՝ Արդարութիւն է։

Ընել ուրիշին ինչ որ կ'ուզենք որ ընեն մեզի՝ Գթասիրութիւն է։

Մարդ մը աշխատելով կ'ապրէր, և կ'ապրեցնէր իր կինն ու փոքրիկ տղաքը. և ըստ որում քալատուղղ էր, հուժկու բազուկներ ունէր, դիւրաւ գործ կը գտնէր, և առանց շատ յոգնելու կրնար իր ընտանիքը նայիլ։

Բայց պատահեցաւ որ երկրին մէջ մեծ տագնապ մը յառաջ եկաւ, գործերը պակսեցան և կեանքի պիտոյքներուն գինը բարձրացաւ։

Ուստի աշխատաւորը և իր ընտանիքը սկսան սաստիկ տառապիլ։ Իր խնայած քիչ մը դրամը սպառելէ յետոյ, հարկադրուեցաւ մէկիկ մէկիկ ծախել նախ իր կարասիները, յետոյ նոյն իսկ իր զգեստներէն մաս մը. և երբ բոլոր ունեցածը հատաւ, ամէն բանէ զուրկ ու անօթի մնաց։ Անօթութիւնը սակայն մինակ չմտաւ իր տունէն ներս, հիւանդութիւն ալ բերաւ իրեն հետ։

Արդ, այս մարդը երկու դրացի ունէր. մէկը շատ հարուստ, միւսը բարեկեցիկ։

Գնաց նախ հարուստին ու ըսաւ. «Ու-
նեցածնիս չունեցածնիս հատաւ, յետին չը-
քաւորութեան մէջ ենք, գթա մեր վրայ։»

Հարուստը պատասխանեց. «Ես ի՞նչ
կրնամ ընել ձեզի. ինծի համար աշխատած
տեսնիդ, վարձքերնիդ ժամանակին չվճա-
րեցի՞ միթէ. ես ոչ ձերին, ոչ ուրիշին իրա-
ւունքը չեմ կերած բնաւ։ Ձեռքերս անիրա-
ւութեամբ աղտոտած չեմ երբեք։ Կը ցա-
ւիմ ձեր թշուառութեան վրայ. բայց ասանկ
պէշ ժամանակ մը ամէն մարդ ինքզինքը
մտածելու է։ Ո՞վ գիտէ որչափ պիտի տևէ։»

Խեղճ հայրը լուեց, և սիրտը աստիճ
վիրաւորուած տուն կը դառնար, երբ միւս
դրացուն հանդիպեցաւ որ առաջինին չափ
հարուստ չէր։

Անիկա գինքը մտածկոտ ու տխուր
տեսնելով, հարցուց. «Ի՞նչ ունիս, ճակատդ
մտահոգ է, և աչքերդ արցունքով լեցուած։

Եւ հայրը, այլայլած ձայնով մը պատմեց
անոր իր դժբախտութիւնը։

Երբ աւարտեց, դրացին ըսաւ. «Ինչո՞ւ
այդչափ կը յուսահատիս, միթէ եղբայր
չե՞նք. ես ի՞նչպէս կրնամ անմխիթար թո-

պուլ եղբայր մը իր դժբախտութեան մէջ։ Եկո՛ւր ունեցածս մէջերնիս բաժնենք...»

Եւ տառապեալ ընտանիքը այսպէս ըսփոփուեցաւ մինչեւ որ կարող եղաւ ինք իր պէտքերը հոգալ։

---

104. ՆԱՐԻՆՋՆԵՐԸ

Կիրակի օր մըն էր. Պօղոս եկեղեցիէն տուն կը վերադառնար։ Ճամբան հանդիպեցաւ մարդու մը՝ որ կողովներով բեռնաւորուած ձի մը կ'առաջնորդէր։

Մարդը կանգ առաւ ճաշարանի մը առջեւ և ըսաւ խանութին տիրոջը.

—Շիտակը փորս անօթի է, կ'ուզեմ ճաշել, բայց ձիս ի՞նչ ընեմ. մէկը չկայ որ սանձէն բռնէ պահիկ մը։

Ճաշարանին տէրը իսկոյն Պօղոսը ցոյց տուաւ։

—Ահաւասիկ տղայ մը որ կրնայ հսկել ձիուդ վրայ։

—Բայց, ըսաւ մարդը, կողովներուն մէջ նարինջներ կան, չըլլայ որ անոնց դպչի։

Ճաշարանին տէրը որ շատ լաւ կը ճանչնար Պօղոսը, մարդը ապահովցուց։

—Շատ պարկեշտ տղայ մըն է, կրնաս իրեն վստահիլ։

Այն ատեն՝ մարդը Պօղոսին մօտեցաւ և ըսաւ.

—Տղաս, եթէ լաւ հակես ձիուս վրայ, վերադարձիս քեզի նարինջ մը պիտի տամ իբր վարձատրութիւն։

Եւ ճաշարան մտաւ։

* * *

Հինգ վայրկեան վերջ անկէ անցաւ Պօղոսի մէկ ընկերը, Մարգարը։

—Ի՛նչ կ՚ընես հոս, ի՛նչ կայ այս կողմերուն մէջ, հարցուց Պօղոսին։

—Երկուքին մէջն ալ նարինջներ կան, ըսաւ Պօղոս. տէրը ճաշարան մտաւ ճաշելու և ըսաւ որ վերադարձին նարինջ մը պիտի տայ ինծի։

—Ինչ բախտաւոր ես, ըսաւ Մարգար։

Ցետոյ նարինջներուն նայեցաւ, տեսաւ որ շատ գեղեցիկ են, չկրցաւ դիմանալ և հատ մը առաւ կողովին մէջէն։

—Շուտ տեղը դիր, ըսաւ Պօղոս, իրաւունք չունիս դպչելու։

—Ձգէ դուն ալ, ըսաւ Մարգար հեգնելով, քո՞ւկդ են որ տէր կ՚ելլես։

Եւ կուսիի հարուած մը իջեցուց Պօղոսին։

Պօղոս սակայն տեղի չտուաւ և սկսաւ մաքառիլ Մարգարի հետ։ Վերջապէս ստիպեց զայն որ նարինջը ձգէ ու փախչի։

Այդ միջոցին՝ ձիուն տէրը որ կուսին աղմուկը լսած էր, դուրս ելաւ ճաշարանէն.

Անիկա անմիջապէս հասկցաւ թէ ի՛նչ անցած դարձած էր, Պօղոսի մօտեցաւ, գովեց անոր պարկեշտութիւնը, և շնորհակալութիւն յայտնելով՝ մէկի տեղ երկու հատ նարինջ տուաւ։

---

105. ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Ա.

Մեզմէ շատ առաջ կար մէկ թագաւոր,
Ունէր ան երկու նորատի աղջիկ,
Մէկը՝ յոյժ տգեղ, միւսը գեղեցիկ։
Օր մը տգեղը ըսաւ միւս քուրին.
«Երթանք ծովափը, քուրի՛կ, միասին։»
Սիրունը գնաց տրտում՝ առջեւէն,
Իսկ չար տգեղը՝ անոր ետեւէն.
Հագիւ թէ ծովուն ափն էին հասած,
Իր սիրուն քոյրը գլորեց վար, ցած։

Կանչեց կիսամեռ սիրուհը ծովէն.
«Քուրիկ, ի՛մ քուրիկ, փրկէ գիս մահէն։
Ես ունիմ տունը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, քեզի ըլլայ, պարգեւէ՛ իմ կեանք։»
—Զայն առանց քեզ ալ կրնամ ստանալ,
Ինձմէ փրկութիւն բնա՛ւ մի յուսար։»
Տգեղին սիրտը դարձեր էր լեռ քար,
Քրոջ խնդիրքը թողուց անկատար։

Բ.

Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան,
Ջուրէն դուրս հանեց, դրաւ ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։
Աշուղ մը անցաւ, աղջիկը տեսաւ,
Լացաւ ու առաւ, ուսին վրայ դրաւ,
Տարաւ իր տունը այդ անգին գիւտը,
Եւ չորցուց անոր մարմինին հիւթը,
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկորէն,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերէն։
Երբոր ամէն բան պատրաստեց կարգին,
Գնաց աղջկան տուն, տաւիղը ձեռքին։
Բացաւ բերանը, լարերը ցնցեց,
Հիւրերուն առջեւ քաղցրաձայն երգեց.
«Լսէ՛, ժողովուրդ, լսէ՛ անխռով.
Հարազատ քոյրս գլորեց գիս ծով։»

Դահիճները միւս օր խարոյկ հինեցին,
Մահապարտ քոյրը մէջը գլորեցին,
Հուրը պլպլաց։ Աղջիկը կանչեց.
«Իմ մեղքիս համար Աստուած զիս պատժեց։»

---

106. Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ

Երկիրն ինձի հարցուց.
Ո՞վ է, ո՞վ Աստուած։
—Ա՛ն՝ Որուն Բարիքով
Աշխարհ է լեցուած.
Ա՛ն՝ Որ միակ քայլով
Կը չափէ անհունն
Եւ Որմէ Արեւն ալ
Կ'առնէ իր շողիւն։

* * *

Ան է Որ ստեղծեց
Երկիրն ու երկինք,
Ա՛ն է Որուն մենք միշտ
Փառք տալ կը պարտինք։
Ա՛ն՝ Որ չո՛ւնի քնաւ
Ո՛չ ծիր, ո՛չ սահման,
Որ տիեզերքին մէջ
Կարգեց ամէն բան։

* * *

Մէկ ակնարկովն Աֆի
Ցոլացոյց Լոյսը,
Մարդ էակին շնորհեց
Սփոփող յոյսը,
Եւ Սէրն ալ հաստատեց
Մարդուս սրտին մէջ,
Ի՛նք՝ Որ անհուն սիրոյ
Հնոցն է անշէջ։

* * *

Ի՛նք՝ ազբիւր բարութեան,
Արեգակն արդար։
Օրհնե՛նք Իր անունն,
Գովե՛նք անդադար։

ՎԵՐՋ

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

(Աստղանիշ հատուածներն ուսանելու են)

Թիւ		Երես
1.	*Աստուծոյ մեծութիւնը*	7
2.	*Համբոյրներս**	8
3.	*Կաղանդ*	9
4.	*Կաղանդ Պապան**	10
5.	*Աղուէսին ուխտը*	11
6.	*Հայկ ու կռիւերը*	12
7.	*Հրեշտակն ու մանկիկը**	13
8.	*Ծոյլ աղջնակը**	13
9.	*Ծոյլ խոբէնը*	14
10.	*Ժրաջանութիւն*	15
11.	*Մեղու**	16
12.	*Արձագանգ*	17
13.	*Փոխադարձ դաս*	18
14.	*Տաճնաբանեայ պատուիրանք առողջապահութեան*	19
15.	*Գրիչ**	21
16.	*Վերէն ու վարէն*	21
17.	*Պարտէզին մէջ**	23
18.	*Մեծ հայրիկը*	24
19.	*Պղտաեր տղան**	25
20.	*Կրթութիւնը կ'ուղղէ բնաւորութիւնը*	26
21.	*Ցուցախտութիւն*	26

22. Մանուչակ* 27
23. Անտառին մէջ 28
24. Մարմնի անդամները* 29
25. Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս . . . 30
26. Ջաղացքը* 32
27. Ս. Գրիգոր Լուսաւորիչ 33
28. Ս. Սահակ Պարթեւ 35
29. Պզտիկ չարաճճին* 37
30. Եղեւնի* 38
31. Տօն կաթոլիկէ Ս. Իջմիածնի . . . 39
32. Ագռաւը* 40
33. Բոյսերը 41
34. Բոյսերը սա բաժանումը ունին . . . 42
35. Բանջարոնոյն բոյսեր 43
36. Ցորենը, գետնախնձորը 44
37. Բժշկական բոյսեր, թունաւոր բոյսեր . . 45
38. Ծիծեռնակ* 46
39. Բարեկամ գտանել 47
40. Հայր մեր* 48
41. Օգտակար չունը 48
42. Կոտրուած հոլմ* 50
43. Յաջող պատասխան 51
44. Վարձատրութիւն 51
45. Ծաղիկներուն երգը* 52
46. Գիւղակ և գիւղ 53
47. Աղօթք ըրէ'* 55
48. Պայտ 56
49. Կենդանիներու վէճը 58
50. Մարդուն հմտութիւնը 59
51. Մկրտուն և Թիթեռը* 57
52. Ձիւնամարդը 60